Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 5 (389) 17-31 մարտ, 2016թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Սահմանադրական բարեփոխումների նախաշեմին

Անցած տարի դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետությունում անցկացվեց սահմանադրական փոփոխությունների հանրաքվե, որով երկիրն անցավ կառավարման խորհրդարանական համակարգի:

Տրամաբանական կամ ենթադրաբար սպասումով փոփոխությունների ալիքը տեղափոխվեց Արցախ: Քաղաքական ուժերի նախաձեռնությամբ տրվեց սահմանադրական բարեփոխումների մեկնարկը: Երկրի նախագահի հրամանագրով արդեն իր աշխատանքներն է սկսել սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը:

Սպասվող քայլը, իրավամբ, կարելի է համարել նորանկախ հանրապետության կայացման եւ ժողովրդավարության ամրապնդման հերթական եւ կարեւորագույն քայլ:

Ենթադրյալ սահմանադրական փոփոխություններն Արցախում, հիրավի, կարող ենք շրջադարձային անվանել. 1991 թ. նորահռչակ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հենց խորհրդարանական կառավարման երկիր էր՝ ԼՂՀ բարձրագույն իշխանությունը պատկանում էր Գերագույն խորհրդին:

Երկրում կառավարման համակարգը Գերագույն Խորհրդի որոշմամբ փոխվեց 1994թ.՝ դառնալով նախագահական:

Արցախում Մայր օրենքը հանրաքվեով ընդունվեց միայն 2006-ին՝ վերահաստատելով արդեն իսկ գործող կառավարման նախագահական համակարգը:

Անցումը կառավարման նոր համակարգի ենթադրում է քաղաքական կուսակցությունների պատասխանատվության մեծացում, ինչը, անշուշտ, հանդիսանում է քաղաքական ուժերի կայացման, նրանց դերի եւ նշանակության բարձրացման նախադրյալ, ասել է թե՝ անցնել քաղաքական ուժերի կառավարման մոդելին:

Փաստացի, երկիրն անցում է կատարում քաղաքական ուժերի կառավարման փուլ:

Անկախ կառավարման համակարգից՝ նոր սահմանադրությունը պետք է հաշվի առնի Արցախի՝ որպես նորանկախ փոքր երկրի առանձնահատկությունները: Այդ սահմանադրությամբ ձեւավորվող կառավարումը պետք է լավագույնս ապահովի եւ երաշխավորի երկրի անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը, բնակչության հավաքական եւ անհատական ֆիզիկական անվտանգությունն ու իրավունքների պաշտպանությունը, ժողովրդավարական արժեքների եւ ինստիտուտների, սոցիալական եւ իրավական նորմերի ամրապնդումը՝ այդկերպ նպաստելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացի դյուրացմանը եւ արդեն իսկ սկսված գործընթացի շարունակականության ապահովմանը:

Եվ ամենագլխավորը՝ բոլոր փոփոխությունների, եւ հատկապես սպասվող այս փոփոխությունների հիմքում անհրաժեշտ է, որ լինի հստակ նպատակ: Այն պետք է լինի մարդակենտրոն, ինչը պետք է ստեղծվի եւ ծառայի քաղաքացուն: Պետք է ամրագրվի մի իշխանություն, որում գլխավոր դերակատարը լինի ժողովրդի կամքը, օրենքի ու իրավունքի տարրը: Մայր օրենքի փոփոխությունը քաղաքացու համար լուրջ է լինելու այնքանով, ինչքանով այն զգալի կլինի նրա կենսագործունեության մեջ՝ դրական առումով:

Արցախի ճանաչման հաղթարշավը հասավ Հավայի

ԱՄՆ Հավայի նահանգի Ներկայացուցիչների պալատը մարտի 29-ին միաձայն ընդունել է Լեռնային Ղարաբաղի անկախությունը ճանաչող բանաձեւ:

Ստորեւ ներկայացնում ենք բանաձեւի տեքստը.

«**ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ**, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը էթնիկ հայկական տարածաշրջան է Հարավային Կովկասում, որն ունի երկար եւ հարուստ պատմություն, եւ իր նվիրական տեղն է զբաղեցնում հայ ժողովրդի պատմության եւ մշակույթի մեջ, եւ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ 1991 թ. դեկտեմբերի 10-ին՝ տասնամյակների պայքարից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի ճնշող մեծամասնությունը քվեարկեց հօգուտ անկախության, եւ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման տեւական պահանջը ոգեշնչեց տարածաշրջանում ապրող բազմաթիվ ժողովուրդների եւ նախկին Խորհրդային Միության փլուզման խթաններից մեկը հանդիսացավ, եւ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովուրդը վերջին երկու տասնամյակների ընթացքում հաստատակամություն եւ տոկունություն ցուցաբերեց պատերազմի, կոտորածների, տնտեսական զրկանքների եւ հսկայական այլ դժվարությունների պայմաններում, եւ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն ավելի քան քսան տարի հավատարիմ է իր քաղաքացիներին՝ պահպանելով իր անկախությունը եւ ջանքեր գործադրելով՝ փոփոխելու եւ կայունացնելու Կովկասյան տարածաշրջանը, եւ անցկացնելով ազատ ու անկախ ընտրություններ եւ հանրաքվեներ, որոնք համընդհանուր կերպով ճանաչվել են որպես օրինակ տարածաշրջանի համար, եւ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, որ բազմաթիվ միջազգային դիտորդներ, այդ թվում Միացյալ Նահանգներից, գնահատել են 2015 թ. մայիսի 3-ի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կայացած խորհրդարանական ընտրությունները՝ որպես ազատ եւ թափանցիկ, հետեւաբար.

Հավայի նահանգի 28-րդ գումարման Ներկայացուցիչների պալատը 2016 թ. հերթական նստաշրջանին ՈՐՈՇՈՒՄ Է հարգել եւ ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը եւ նրա քաղաքացիներին, եւ

ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՈՐՈՇՈՒՄ Է, որ այս մարմինը ճանաչում է զոհողությունները եւ նվիրվածությունը եւ վճռականությունը, որոնք ցուցաբերվել են ԼՂՀ ժողովրդի կողմից ծայրահեղ դժվարությունների պայմաններում, եւ

ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՈՐՈՇՈՒՄ Է, որ այս մարմինը հղում է ԼՂՀ կառավարությանը եւ նրա ժողովրդին խաղաղության, բարգավաճման եւ շարունակական հաջողությունների իր լավագույն մաղթանքները, եւ

ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՈՐՈՇՈՒՄ Է, որ այս մարմինը կոչ է անում միջազգային հանրությանը՝ ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ որպես ազատ, անկախ եւ ինքնիշխան ժողովրդավարություն, եւ

ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՈՐՈՇՈՒՄ Է, որ սույն բանաձեւի վավերացված պատճենները կփոխանցվեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը՝ նրա՝ Հավայիում գտնվող ներկայացուցիչների միջոցով, եւ լրացուցիչ վավերացված պատճենները կփոխանցվեն Միացյալ Նահանգների նախագահին, ԱՄՆ Սենատի մեծամասնության ղեկավարին, Ներկայացուցիչների պալատի խոսնակին, Միացյալ Նահանգների Կոնգրեսում Հավայի ներկայացուցիչներին»:

Նշենք, որ Հավային դարձավ ԱՄՆ 7-րդ նահանգը, որը ճանաչեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը՝ միանալով Մասաչուսեթսի, Ռոդ Այլենդի, Լուիզիանայի, Քալիֆորնիայի, Մեյնի եւ Ջորջիայի նահանգներին:

ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչն ամփոփել է Եվրոպա կատարած այցի արդյունքները

Արցախյան շարժման 28-ամյակի շրջանակներում Ֆրանսիայում կազմակերպված «Զորակցություն Արցախին ու Հայկական բանակին» խորագիրը կրող միջոցառումներին մասնակցելու նպատակով՝ Արեւմտյան Եվրոպայի ՀՅԴ ԿԿ հրավերով Եվրոպայում էր գտնվում ՀՅ Դաշնակցության Արցախի ԿԿ ներկայացուցիչ, ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանը: Այցի ընթացքում նա մի շարք կարեւոր հանդիպումներ է ունեցել, հանդես եկել Արցախի ներկա կացության եւ Արցախյան հիմնախնդրի վերաբերյալ դասախոսություններով ու ելույթներով:

Այցի մասին «Ապառաժ»-ի հետ զրույցում Դ. Իշխանյանը նշել է, որ շատ հաճախ ադրբեջանական լրատվամիջոցներին հաջողվում է ապատեղեկատվություն տարածել, եւ մեր հայրենակիցները, չունենալով հստակ տեղեկատվություն, երբեմն հավատում են մատուցված տեղեկատվության իրական լինելուն: Այս առումով Դ. Իշխանյանը կարեւորել է, որ հայկական ԶԼՄ-ներն անելիքներ ունեն, ավելի կազմակերպված աշխատանքի անհրաժեշտություն:

Իշխանյանը Լիոն, Վալանս եւ Փարիզ քաղաքներում հնարավորություն է ունեցել ուղիղ եթերով հայկական ռադիոկայաններին հարցազրույցներ տալու եւ նույնպես անդրադարձել է այս խնդիրներին:

«Անհրաժեշտություն կա նոր մոտեցումներ որդեգրելու: Այս առումով հայկական լրատվամիջոցներն ունեն լուրջ անելիքներ՝ որոշակիորեն հակազդելու եւ հակակշռելու ադրբեջանական քարոզչական ագրեսիային»,- նշել է նա:

Այցի ընթացքում ամենակարեւոր քաղաքական հանդիպումները Ֆրանսիայի Ազգային Ժողովում տեղի ունեցած հանդիպումն էր: ՀՅԴ Բյուրոյի անդամ Մուրատ Փափազյանը եւ Դավիթ Իշխանյանը Ֆրանսիայի Ազգային ժողովում հանդիպում են ունեցել Ֆրանսիայի ԱԺ սոցիալիստական խմբակցության ղեկավար Բրունո Լե Ռուի եւ սենատոր, Արֆորվիլ քաղաքի քաղաքապետ Լյուկ Կարվունազի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Արցախում տիրող ընդհանուր իրավիճակը, անդրադարձել են Ղարաբաղյան հակամարտությանը, այսօրվա ընդհանուր կացությանն ու Ղարաբաղի ներքին կյանքի զարգացման հեռանկարներին, Ֆրանսիա-Արցախ հետագա համագործակցության եւ Ֆրանսիայի՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրի դերակատարության առավել ակտիվացման հարցերին:

Խոսելով վերջին երկու տարիներին սահմանում տիրող ընդհանուր իրավիճակի մասին՝ Իշխանյանը Ֆրանսիայի ԱԺ սոցիալիստական խմբակցության ղեկավար Բրունո Լե Ռուի եւ սենատոր, Արֆորվիլ քաղաքի քաղաքապետ Լյուկ Կարվունազի հետ հանդիպման ընթացքում ներկայացրել է Ադրբեջանի կողմից տարվող մարտավարությունը՝ ընդգծելով, որ այն աստիճանաբար տանում է դեպի ավելի խորը ռազմական ընդհարումների: Ադրբեջանն արդեն ոչ միայն կոպտորեն խախտում է զինադադարի ռեժիմը, այլեւ փորձում է հարցը շեղել խաղաղ ճանապարհով լուծելուց:

Դ. Իշխանյանը հանդիպման ընթացքում Ֆրանսիայի խորհրդարանականների ուշադրությանն է արժանացրել եւ անդրադարձել է ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի Արտաքին գործերով հանձնաժողովի ղեկավարներ Էդ Ռոյսի եւ Բրեդ Շերմանի նախաձեռնությանը: Անցյալ տարվա դեկտեմբերին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի 85 անդամների կողմից ստորագրված նախաձեռնությունը ներառում է առանցքային մի շարք կետեր, ըստ որոնց՝ շփման գծից դիպուկահարներին ետ քաշելու հարցում հակամարտության կողմերի միջեւ համաձայնություն պետք է ձեռք բերվի եւ հատուկ սարքավորումներ տեղակայվի՝ սահմանային միջադեպերի հեղինակներին պարզելու համար:

Դավիթ Իշխանյանը կոչ է արել հնարավորինս ազդելու Ֆրանսիայի քաղաքական շրջանակների վրա՝ աջակցելու այս նախաձեռնությանը՝ վստահեցնելով, որ դա Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ լուրջ քայլ կարող է լինել:

«Ադրբեջանական լոբբինգի արդյունքում մի այնպիսի իրավիճակ է ստեղծվել, որ Ղարաբաղյան հիմնահարցը ներկայացվում է հակառակ կողմից՝ հայկական կողմին դիտելով որպես ագրեսոր կամ էլ՝ հավասարության նշան դնելով երկու կողմերի միջեւ: Հարցի շուրջ անհրաժեշտ է տարբեր քաղաքական շրջանակների ներգրավվածությունը եւ նրանց ուղղակի այցերի կազմակերպումն Արցախ»,- ասաց ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչը:

Մարտի 11-ին Ֆրանսիայի Մարսել քաղաքում ՀՅ Դաշնակցության Արցախի ԿԿ ներկայացուցիչը հանդիպել է Մարսելի փոխքաղաքապետ Դիդիեր Փառաքյանին:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Մարսել-Արցախ համագործակցության հեռանկարները:

Դ.Իշխանյանը ներկայացրել է այն ոլորտները, որոնց շրջանակներում կարող են ունենալ հետագա համագործակցություն:

Մարտի 12-ին Վալանս քաղաքում Դ.Իշխանյանը հանդիպել է Ֆրանսիայի ԱԺ պատգամավոր, Պաշտպանության հանձնաժողովի անդամ Նաթալի Նիսոնի հետ՝ քննարկելով հետագա համագործակցության հնարավորությունները:

Նույն օրը Վալանսի հայ մշակութային կենտրոնում տեղի են ունեցել հանդիպումներ Վալանսի քաղաքապետ Նիկոլա Դարագոնի եւ Բուրգ լե Վալանսի քաղաքապետ Մարլեն Մուրիերի հետ:

Հանդիպումներին մասնակցել են Արեւմտյան Եվրոպայի ՀՅԴ ԿԿ անդամներ Հրաչ Վարժապետյանը, Տիգրան Շահմիրյանը եւ Անդրանիկ Նշանյանը:

Դավիթ Իշխանյանը մասնակցել է նաեւ Փարիզում, Լիոնում, Բրյուսելում եւ Հոլանդիայում կազմակերպված ձեռնարկներին:

Նա Բրյուսելում հանդիպում է ունեցել նաեւ Ֆլանդրիայի խորհրդարանի անդամ Սիմոնա Զուսկինդի հետ, ով վերջերս այցելել էր Արցախ, անդրադարձել Արցախում տիրող քաղաքական եւ տնտեսական վիճակին, հիմնախնդիրներին:

Խոսելով նման հանդիպումների արդյունավետության մասին՝ Իշխանյանն ասաց, որ երկկողմ հանդիպումները մեծ նշանակություն կարող են ունենալ, եւ կարող են Արցախի Հանրապետության ճանաչման միջազգային գործընթացում կարեւոր քայլ հանդիսանալ:

Անդրադառնալով հայկական համայնքին եւ նրա՝ Արցախի ճանաչման եւ զարգացման աշխատանքներին ներգրավվածությանը, Իշխանյանն ընդգծեց, որ հայկական ներուժը Ֆրանսիայում, Բելգիայում եւ Հոլանդիայում բավականին մեծ է:

«Մենք ունենք բավականին լուրջ ռեսուրսներ Եվրոպական երկրներում, հատկապես քաղաքական շրջանակներում: Հայկական լոբբինգը կարող է լուրջ դերակատարություն ունենալ վերը նշված երկրներում: Թերեւս, մեզ անհրաժեշտ է արտաքին քաղաքականության բնագավառում ավելի համակարգված աշխատանք վարել, որի մեջ հսկայական է հայկական համայնքների դերը, հատկապես Ֆրանսիայում դա շոշափելի եւ տեսանելի է»:

Հարցազրույցը՝ Ա. ՆԱՐԻՆՅԱՆԻ

Կայացել է ԼՂՀ Ազգային Ժողովի հերթական լիագումար նիստը

Մարտի 24-ին տեղի է ունեցել վեցերորդ գումարման Ազգային ժողովի երրորդ նստաշրջանի հերթական լիագումար նիստը:

Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, ողջունելով ներկաներին, անդրադարձել է փետրվար-մարտ ամիսներին Արցախի հետ կապված քաղաքական իրավիճակին եւ միջազգային զարգացումներին: Անդրադարձ կատարելով երկու օր առաջ Բրյուսելում տեղի ունեցած ահաբեկչությանը՝ Աշոտ Ղուլյանը դատապարտել է այդօրինակ սանձարձակությունները եւ աջակցություն հայտնել Բելգիայում ապրող բոլոր ժողովուրդներին՝ ի դեմս վերջերս Արցախ այցելած ֆլամանդացի գործընկերների:

«Թերեւս, տեղին է հիշեցնել, որ տարիներ առաջ մեր տարածաշրջանում նոր-նոր դրսեւորվող միջազգային ահաբեկչության հանդեպ անտարբերությունը՝ ադրբեջանական արկածախնդրության տեսքով, պատճառ են դարձել այդ բացիլների տարածմանը ամբողջ աշխարհում եւ լուրջ մարտահրավեր՝ շատ ժողովուրդների համար»,- նշել է խորհրդարանի նախագահը:

Անցնելով օրակարգային հարցերին՝ Ազգային ժողովը քննարկել եւ երկրորդ ընթերցմամբ ընդունել է ԼՂՀ կառավարության պաշտոնական ներկայացուցիչ, գյուղատնտեսության նախարար Արամ Մխոյանի ներկայացրած «Սնդամթերքի անվտանգության մասին», «Սնդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ԼՂՀ օրենքում լրացում եւ փոփոխություններ կատարելու մասին», «Կերի մասին» եւ «Բուսասանիտարիայի մասին» ԼՂՀ օրենքները:

Արցախի հանրային հեռուստառադիոընկերության 2015թ. գործունեության մասին հաղորդմամբ հանդես է եկել Արցախի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Նորեկ Գասպարյանը: Խորհրդի նախագահն իր զեկույցում մասնավորապես նշել է, որ 2015-ին հեռուստառադիոընկերության կայք այցելածների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 27%-ով՝ հասնելով 1մլն 600 հազարի:

Պատգամավորները Նորեկ Գասպարյանին առաջադրել են հարցեր՝ կապված հեռուստահաղորդումների բովանդակության, տեխնիկական ապահովվածության, որակի, եթերաժամի եւ նոր ձեւաչափերի ներդրման անհրաժեշտության վերաբերյալ եւ ներկայացրել առաջարկություններ:

Նիստի ավարտին հայտարարությամբ հանդես է եկել պատգամավոր Հայկ Խանումյանը:

Ազգային ժողովի լիագումար նիստին մասնակցել են նաեւ ԱրՊՀ պատմության եւ իրավագիտության ֆակուլտետի իրավագիտություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողները, ովքեր երկու շաբաթ առաջ փորձուսուցում են անցել խորհրդարանում:

ԼՂՀ ԱԺ
մամուլի ծառայություն

Վահրամ Բալայանն անդրադարձել է Հավայի նահանգի կողմից ԼՂՀ ճանաչմանը

Մարտի 29-ին ԱՄՆ Հավայի նահանգի Ներկայացուցիչների պալատը ճանաչել է Արցախի Հանրապետության անկախությունը՝ միաժամանակ հորդորելով, որ միջազգային հանրությունը եւս ճանաչի ԼՂՀ-ն՝ որպես ազատ, անկախ եւ ինքնիշխան ժողովրդավարական պետություն: Այս թեմայի շուրջ իր տեսակետն է հայտնել ԼՂՀ ԱԺ փոխնախագահ, ՀՅ Դաշնակցության Արցախի ԿԿ անդամ Վահրամ Բալայանը:

Նա նախ շնորհակալության խոսք է հղել նահանգի Ներկայացուցչական պալատին եւ նահանգի ժողովրդին՝ նման կարեւոր ու ճիշտ որոշում ընդունելու համար, ապա նշել. «Այս իրադարձությունը ե՛ւ ՀՅ Դաշնակցության Հայ Դատի հանձնախմբերի, ինչպես նաեւ Արցախի իշխանությունների, ու Արցախի ազգաբնակչության՝ 1991-ից մինչ այսօր տարվող հետեւողական աշխատանքների արդյունք է: Հավայի նահանգի Ներկայացուցիչների պալատի ընդունած բանաձեւի մեջ նշված է, թե ինչու են նրանք ճանաչել Արցախի անկախությունը: Մատնանշված է, որ մեր երկրում ժողովրդավարությունը տարեցտարի ամրապնդվում ու կատարելագործվում է, որը կարեւոր պայման է: Շեշտադրված է նաեւ պատմական հենքը, որ հազարամյակներ շարունակ հայություն է ապրել այստեղ, կերտել իր պետականությունը, ազգային մշակույթը եւ այլն: Ես համոզված եմ, որ աշխարհի ժողովրդավարական ուժերը, այդ թվում ԱՄՆ-ն, այս տարիներին ինչ-որ տեղ հնարավորություն են տվել մեզ՝ դրսեւորելու եւ, ըստ երեւույթին, այս որոշումը նաեւ դրա վկայությունն է»:

Պատահականությու՞ն է արդյոք, թե՞ կողմերից մեկին ուղղված մեսիջ, որ այս օրերին, երբ ակնկալվում է ԱՄՆ-ում ՀՀ եւ Ադրբեջանի նախագահների հանդիպում, ընդունվեց նման որոշում: Այս հարցի վերաբերյալ Վ. Բալայանը կարծում է. «Հայ Դատի գրասենյակները նպատակային եւ ծրագրված աշխատանք են կատարում: Համոզված եմ, որ սա վերջինը չի լինելու, այլ շարունակական բնույթ է կրելու, մենք ականատես ենք լինելու նաեւ ԱՄՆ-ի՝ պետական մակարդակով Լեռնային Ղարաբաղի ինքնիշխանության ճանաչմանը: Ինչ վերաբերում է երկու երկրների նախագահների հնարավոր հանդիպմանը, ապա, ինչո՞ւ չէ, սա էլ իր նշանակությունն ունի, այսինքն՝ ժողովրդավարության ճանապարհով ընթացող երկիրը՝ ԱՄՆ-ն, ուզում է ասել, որ ինքը պատրաստ է աջակցելու այն երկրներին, ովքեր փորձում են ներկայանալ որպես ժողովրդավարության կղզյակ, սատարել մի երկրի, որը ձգտում է ինտեգրվել աշխարհին, առաջնորդվել ժողովրդավարական սկզբունքներով: Այնպես որ, այս տեսանկյունից՝ դա պատահական չէ:

Մյուս կողմից, եթե նկատել եք Միացյալ Նահանգների՝ թե՛ Կոնգրեսի, թե՛ առանձին նահանգների մակարդակներով ճնշումն Ադրբեջանի նկատմամբ գնալով ավելի է մեծանում: Որպես օրինակ՝ նշենք վերջին ժամանակներում Նյու Ջերսիի պատգամավոր Բրիստոֆ Սմիթի կողմից առաջարկված օրինագիծը, որտեղ հստակ գրված է, որ պետք է համապատասխան վերաբերմունք ցույց տալ Ադրբեջանի պաշտոնական այն շրջանակների նկատմամբ, ովքեր քաղաքական հետապնդումների են ենթարկում Ադրբեջանում ապրող ազգային փոքրամասնություններին, քաղաքականությամբ զբաղվող այն մարդկանց, ովքեր փորձում են Ադրբեջանը դարձնել ժողովրդավարական երկիր: Այս օրինագծին միացան նաեւ այլ պատգամավորներ: Այս եւ նման շատ օրինակներ կարելի է բերել, որոնք վկայում են ոչ միայն ՀՅԴ Հայ Դատի գրասենյակների եւ հայկական կազմակերպությունների քրտնաջան աշխատանքների մասին, այլ նաեւ ցույց են տալիս, որ աշխարհի տարբեր քաղաքական գործիչներ սկսում են հասկանալ, որ պետք է սատարել ժողովրդավարության ճանապարհով ընթացող երկրներին»:

Բանաձեւը Ներկայացուցչական պալատի կողմից ընդունվեց միաձայն, ինչը Վահրամ Բալայանը կարեւորում է՝ նշելով, որ այս փաստը վկայում է Հավայի նահանգի թե՛ հանրապետական, թե՛ դեմոկրատական կուսակցությունների ներկայացուցիչների՝ Լեռնային Ղարաբաղի հարցում համախորհուրդ ու միակամ լինելու մասին:

Վ. Բալայանը նաեւ շեշտում է. «Եթե մեր հարեւան երկրի որոշ քաղաքական գործիչներ մտածում են, թե Արցախը մի օր կլինի Ադրբեջանի կազմում, ապա պետք է ասել, որ նրանք հեռու են տրամաբանությունից: Այս երկրամասը երբեք Ադրբեջանի մաս չի եղել, չի էլ լինի: Այս ժողովուրդը դարերի ընթացքում պետականություն է ունեցել եւ ունենալու է»:

Հրադադարի խախտումների ակտիվացումն ու սահմանին տիրող ներկա իրավիճակը Վ. Բալայանը բնորոշում է «սողացող պատերազմ» եզրույթով եւ նշում. «Ադրբեջանը փորձում է պատերազմ վարելու նոր մեթոդներով մեզ ներքաշել հակամարտությունը ուժի միջոցով լուծելու գործընթացին, բայց ես համոզված եմ, որ ոչ մի արդյունքի չի հասնի, որովհետեւ նա վերջին տասնամյակների ընթացքում բազում ձեւերով՝ շրջափակման, ռազմական եւ դիվանագիտական ճնշումների միջոցներով փորձ է արել հասնելու իր երազած հաջողությանը, սակայն չի ստացվել: Ադրբեջանի գործողությունները տիպիկ ահաբեկչության են նման: Երբ նա կրակում է խաղաղ բնակչի վրա, ապա դա արդեն ահաբեկչություն է, իսկ դրա դեմ այսօր ամբողջ աշխարհն է պայքարում: Աշխարհը պետք է արձանագրի, որ Ադրբեջանը ահաբեկչական պետություն է»:

Արցախի անկախության ճանաչման խնդիրը, ընդգծել է Բալայանը, ՀՅԴ Հայ Դատի գրասենյակների ամենօրյա աշխատանքների հիմքում է դրված: Այն նաեւ համայն հայության պահանջատիրության մի մասը պետք է կազմի, քանզի Արցախի խնդիրը հայության խնդիրն է:

Թե ինչպիսի արդյունքի կարող ենք հասնել ճանաչումների այս շարունակական գործընթացներով, քաղաքական գործիչն ասում է. «Այս ամենն առանց հետեւանքի մնալ չի կարող: Սա նաեւ հայությանն է մղում ավելի ակտիվ ու նպատակային գործողությունների: Միացյալ նահանգների ամեն մի նահանգ, ըստ էության, ներկայանում է որպես առանձին պետական միավոր՝ իր քաղաքական համակարգով, մշակույթի ձեռքբերումներով, իր տնտեսությամբ: Բնականաբար, դա դեռ իր հետեւանքներն ունենալու է...Չմոռանանք, որ 1998-2015թթ. ընթացքում ԱՄՆ-ն 44.5 մլն դոլարի աջակցություն է ցույց տվել մեզ...»:

Նահանգային մակարդակով ճանաչումից, անշուշտ, անցում է լինելու նաեւ պետական մակարդակով ճանաչմանը: Սա Վ. Բալայանի համոզմունքն է:

Հ. ԱՎԱԳՅԱՆ

Արցախի պատվիրակությունն այցելել էր Լիբանան

Արցախի Հանրապետության վարչապետ Արայիկ Հարությունյանի գլխավորած պատվիրակությունը մարտի 12-ին աշխատանքային այցով մեկնել էր Լիբանան: Արցախի պատվիրակության կազմում էր նաեւ ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության անդամ Ալյոշա Գաբրիելյանը:

Նրանք մասնակցել են Բեյրութում կազմակերպված, Արցախի անկախության 25-րդ տարեդարձին նվիրված միջոցառմանը, ինչպես նաեւ հանդիպում են ունեցել մի խումբ լիբանանցի գործարարների հետ:

Պատվիրակությունը մի շարք հանդիպումներ է ունեցել հայազգի եւ օտար ներդրողների հետ, նրանց հետ քննարկել Արցախում ներդրումային եւ բարեգործական ծրագրերի իրականացման հարցեր եւ ձեռք բերել համագործակցության կոնկրետ պայմանավորվածություններ: Հանդիպումներ են եղել նաեւ մի խումբ լիբանանցի գործարարների հետ, որոնց ժամանակ ԼՂՀ վարչապետ Արայիկ Հարությունյանը ներկայացրել է Արցախի տնտեսության առաջնահերթություններն ու ներդրումային գրավչությունը:

Գործարարների հետ քննարկվել են հնարավոր համագործակցության հեռանկարները, ինչպես նաեւ ձեռք բերվել որոշ պայմանավորվածություններ՝ կապերի հետագա խորացման շուրջ:

Պատվիրակությունը նաեւ հանդիպել է «Արցախ Ռութ Ինվեսթմընթս» ընկերության տնօրենների խորհրդի անդամների հետ, որի ընթացքում քննարկվել է ընկերության ծրագրերը, դրանց իրագործման ընթացքը եւ հետագա ուղղությունները: Ա. Հարությունյանը բարձր է գնահատել ընկերության ներդրումը Քաշաթաղի շրջանի զարգացման եւ բնակիչների բարեկեցության մակարդակի բարելավման գործում՝ համոզմունք հայտնելով, որ կառավարության եւ ընկերության միջեւ սերտ համագործակցությունն այսուհետ ավելի կխորանա եւ կընդլայնվի:

Մարտի 13-ին արցախյան պատվիրակությունը մասնակցել է Մեծի Տանն Կիլիկիո Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Առաջին կաթողիկոսի գլխավորությամբ մատուցված սուրբ պատարագին, այնուհետեւ Անթիլիասի կաթողիկոսարանում հանդիպում է ունեցել Արամ Առաջինի հետ: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը ողջունել է Արցախի պատվիրակությանը՝ հավաստիացնելով, որ Արցախի զարգացման ու անվտանգության ապահովումը համայն հայության առաջնահերթություններից է, եւ Անթիլիասի կաթողիկոսությունը եւս ծառայում է այդ առաքելությանը:

Մարտի 14-ին տեղի է ունեցել «Արցախ Ռութ Ինվեսթմընթս»-ի (ԱՌԻ) 6-րդ տարեկան ընդհանուր ժողովը, որին մասնակցել է նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատվիրակությունը:

Բացման խոսքով հանդես է եկել ԱՌԻ-ի վարչության ատենապետ Սուրեն Սարգիսյանը, ով զեկույց է ներկայացրել Արցախում ԱՌԻ-ի գործունեության մասին՝ ամփոփ կերպով թվարկելով ընկերության կատարած աշխատանքները եւ կոչ անելով բաժնետերերին՝ ավելացնելու ներդրումների քանակը, ինչպես նաեւ ուրիշներին ծանոթացնելու եւ ընգրկելու ԱՌԻ-ի աշխատանքներին:

Ապա ԱՌԻ-ի խորհրդի անդամ Մասիս Ալեքսանդրյանը խոսել է ԱՌԻ-ի իրագործումների մասին՝ հիշեցնելով, որ վեց տարի առաջ 16 բաժնետերով սկսած այս նախաձեռնությունն այսօր ունի 187 բաժնետեր, ինչպես նաեւ՝ 325 հազար դոլարով սկսած աշխատանքն այսօր հասել է 3 միլիոն 671 հազար դոլար գումարի: Ալեքսանդրյանը մանրամասնել է Արցախին օգնելու եւ շրջանի բարգավաճմանը ծառայող ԱՌԻ-ի ծրագրերի արձանագրած հաջողության մասին:

Հիշեցնենք, որ 2009 թվականից առայսօր ԱՌԻ ընկերությունը Քաշաթաղի եւ Քարվաճառի շրջաններում իրագործել է տասնյակ ծրագրեր՝ նպատակ ունենալով օժանդակել Արցախի կառավարությանը՝ վերաբնակեցնել եւ հզորացնել սահմանամերձ գյուղերը՝ գիտակցելով, որ դա նախ եւ առաջ կարեւոր է ռազմավարական տեսանկյունից:

Բեյրութում պատվիրակության մասնակցությամբ կազմակերպվել է Արցախի անկախության 25-րդ տարեդարձին նվիրված միջոցառում, այնուհետեւ հանդիպում մի խումբ լիբանանցի գործարարների հետ:

Պատվիրակության կազմում ընգրկված, ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության անդամ Ալյոշա Գաբրիելյանը «Ապառաժ»-ի հետ զրույցում կարեւորել է Լիբանանում տեղի ունեցած հանդիպումները՝ նշելով, որ նման հանդիպումները խթան են հանդիսանում նոր ծրագրերի իրականացման՝ վերաբնակեցման, ինչպես նաեւ տնտեսության ոլորտում:

«Տարիներ շարունակ լիբանանահայությունը, հանդիսանալով սփյուռքի մեր հզորագույն կենտրոններից մեկը, տարբեր ոլորտներում իր օժանդակությունն է ցուցաբերել Արցախին: ԱՌԻ ընկերությունն, արդեն 7 տարի է, Արցախում բազմազան ծրագրեր է իրականացնում, որոնք ունեն թե ռազմավարական, թե սոցիալական նշանակություն: Վստահ եմ, որ այս այցից հետո ավելի կընդլայնվի Արցախ- Լիբանան համագործակցությունը»,- ասել է պատգամավորը:

Լիբանան կատարած այցի ժամանակ Ալյոշա Գաբրիելյանը հանդիպել է Բեյրութի ՀՅԴ «Զավարյան» ուսանողական միության անդամների, ինչպես նաեւ Այնճարի հանրակրթական դպրոցի բարձր դասարանների աշակերտների հետ: Նա խոսել է Արցախի, Արցախի խնդիրների եւ նրանց, որպես խելացի եւ ակտիվ երիտասարդների, Արցախի հարցին ընդգրկվելու կարեւորության եւ անհրաժեշտության մասին:

Ալյոշա Գաբրիելյանը կարեւորել է հայ երիտասարդի՝ ազգային արժեքներին հետեւելու եւ այդ արժեքներով առաջնորդվելու պարագան՝ նշելով, որ միայն այդկերպ հայը կարող է օտարի երկրում հայ մնալ՝ չձուլվելով օտարներին:

«ԱՊԱՌԱԺ»

Կինը եւ քաղաքականությունը. Զրույց ԼՂՀ ԱԺ կին պատգամավորների հետ

Մերօրյա հասարակական եւ քաղաքական կյանքում մեծ դեր ունի կինը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդարանն ունի 33 պատգամավոր, որոնցից 5-ը կանայք են: Որքանո՞վ են համատեղելի կինը, ընտանիքը եւ քաղաքականությունը. այս հարցի շուրջ «Ապառաժ»-ը զրուցել է խորհրդարանի տարբեր քաղաքական ուժերի կին պատգամավորների հետ:

Ռիտա Մնացականյան

- Դարեր շարունակ մարդկության պատմության մեջ քաղաքականությունն իրականացրել է կինը՝ ղեկավարելով տոհմը եւ պահպանելով մարդկային սերունդը:

Ընտանիքի ձեւավորումը կնոջը հեռացրեց քաղաքականությունից եւ քաղաքականությունը դարձավ «նորին մեծություն» տղամարդկանց մենաշնորհը: Բայց պատմության մեջ հայտնի են կանայք, ովքեր զբաղվել են մեծ քաղաքականությամբ եւ խոր հետք են թողել: Եղել են կանայք, ովքեր կուլիսների հետեւում են գործել եւ ազդել պատմության ընթացքի վրա:

Նոր ժամանակներում տղամարդու եւ կնոջ հավասարության հռչակումը կնոջը հնարավորություն տվեց զբաղվել ցանկացած աշխատանքով:

Ընդհանրապես, ցանկացած աշխատանք կնոջը հեռացնում է ընտանիքից, քաղաքականությամբ զբաղվելը, կարծում եմ, առավել եւս: Բայց, կարծում եմ նաեւ, որ քաղաքականությամբ կարող են զբաղվել ուժեղ կանայք, ովքեր կարող են համատեղել ընտանիքն ու սիրած աշխատանքը:

Այսօր էլ քաղաքական կյանքում, երկրի պետականաշինության գործում մեծ ու կարեւոր է կնոջ դերը: Շատ հաճախ ամենափայլուն կամ բեկումնային գաղափարները ծնվում են կանանց մոտ: Կանայք յուրօրինակ իմաստնությամբ են օժտված, ինչը միշտ էլ օգնել է նրանց մեծ ու փոքր գործերում:

Կինը միշտ էլ ասելիք ունի, եւ կարող է իր ուրույն դերակատարությունն ունենալ քաղաքական կյանքում, սակայն ամենօրյա աշխատանքից հետո նա պետք է «հրաժեշտ տա» քաղաքականությանը եւ տուն մտնի՝ որպես հոգատար մայր, հուսալի կողակից, սիրող տատիկ, տանտիրուհի:

Ռոմելա Դադայան

- Կինը՝ ամուսնու կողակիցը, միշտ եղել է ընտանիքի հիմնասյունն ու պահապանը: Կինն արարածն է, որ կարողանում է ընտանիքը պահել: Եթե ամուր է կին-ամուսին փոխհարաբերությունը, ուրեմն ամուր է նաեւ ընտանիքը: Եթե ամուր է ընտանիքը, ամուր է նաեւ պետությունը: Եթե ընտանիքում լավ երեխաներ են դաստիարակվում, նույն պետության համար են մտածում ե՛ւ կինը, ե՛ւ ամուսինը: Ամեն ինչ սկսվում է հենց այստեղից:

Կինը պարտավոր է լինել ոչ միայն մայր, այլ նաեւ հասարակության կողմից հարգված եւ հասարակությանն օգտակար անձնավորություն:

Կին ասելով՝ միայն ընտանիք եւ նոր սերունդ դաստիարակող չէ, որ հասկանում ենք: Կին ասելով՝ հասկանում ենք նաեւ այս երկրի ապագայի մասին մտածող անձնավորություն:

Կինը, եթե ունի մասնագիտություն, պարտավոր է այն ծառայեցնել պետությանը: Եթե նա կարողացավ համատեղել ընտանիքը, մասնագիտությամբ աշխատանքը, գումարած նաեւ քաղաքական գործունեությունը, նշանակում է, որ նա կարողացել է հասնել ամեն ինչի: Բայց սա շատ հեշտությամբ չի տրվում: Պիտի կարողանալ այս ամենը համատեղել, եւ կնոջ գործունեությունը չպետք է մեկը մյուսին խանգարի:

Լինելով «Ազատ հայրենիք» կուսակցության անդամ եւ կուսակցության կին ներկայացուցիչն ԱԺ-ում՝ ներկայացնում եմ այդ կուսակցության տեսակետները եւ, հետեւելով կանոնադրությանը, փորձում իրականացնել կուսակցության ծրագիրը, սակայն՝ միայն ճշմարտության ճանապարհով: Եթե, իմ կարծիքով, ինչ-որ բան գտնում եմ, որ այնպես չէ, ինչպես ուզում ենք ներկայացնել, ես դրան համաձայնել չեմ կարող: Պարտադրված ոչինչ անել չի կարելի. անկախ կուսակցական պատկանելությունից՝ պետք է քո սեփական համոզմունքն ունենաս: Ես իմ համոզմունքներն ունեմ եւ միշտ հավատարիմ եմ դրանց:

Լյուդմիլա Բարսեղյան

- Քաղաքական կյանքը եւ ընտանիքը, ըստ ինձ, համատեղելի են եւ մեկը մյուսին չեն խանգարում: Որպես կին՝ համարում եմ, որ ամենաառաջնայինը եւ ամենագլխավորն ընտանիքն է եւ ընտանիքի ամրությունը: Ընտանիքում լավ հարաբերությունները թույլ են տալիս, որ կինը զբաղվի քաղաքականությամբ: Իմ ընտանիքում երբեք նման խնդիր չի առաջացել:

Եթե նպատակ ունես զբաղվել քաղաքականությամբ, պետք է գիտակցես, որ քո ընտանիքը ոչ մի առումով չպիտի տուժի: Եթե ամուսինների միջեւ կա փոխվստահություն, ապա ոչ մի խնդիր չի առաջանա:

Ես ոչ միայն կին եմ եւ մայր, այլ նաեւ՝ տատիկ: Եթե կինն ունի նպատակներ, ապա կարողանում է իր կյանքն այնպես դասավորել, որ իր քաղաքական գործունեությունը չխանգարի ընտանիքին:

Կինը, անշուշտ, պետք է զբաղվի քաղաքականությամբ, որովհետեւ դա անհրաժեշտություն է մեր օրերում:

Կինը պետք է իմաստուն լինի, եւ կյանքն ավելի լավ հասկանա, քան տղամարդիկ. դա իմ կարծիքն է: Թող չասեն՝ ուժեղ եւ թույլ սեռ: Ես դրանից միշտ վիրավորվում եմ: Ճիշտ է՝ տղամարդիկ ֆիզիկապես ուժեղ են, սակայն կինն աշխատում է ե՛ւ դրսում, ե՛ւ տանը. հիմա ո՞վ է ավելի ուժեղ:

Մենք խորհրդարանում պատգամավոր ենք՝ կոչված բարձրացնելու մեր ժողովրդի խնդիրները, լինելու նրա իրավունքների պաշտպանը: Իսկ տանն ամենից առաջ մենք կին ենք, մեր օջախների պահապանը:

Արզիկ Մխիթարյան

- Կնոջ ֆենոմենը բավականին հետաքրքիր ու հարուստ բովանդակություն ունի, որովհետեւ ի սկզբանե կինը կոչված է վերարտադրելու մարդկային տեսակը: Ցանկացած կնոջ մեջ պետք է նստած լինի մայրանալու գաղափարը եւ ցանկությունը, որը, իմ կարծիքով, մեծամասամբ իրագործվում է, առանձնապես՝ հայ կնոջ կողմից: Ցանկացած մայր փորձում է իր տեսակը վերարտադրել եւ պատասխանատու լինել իր սերնդի դաստիարակվածության, հայրենիքի եւ պետության նվիրվածության առումով: Այս առումով՝ ինձ համար նորույթ չէ նաեւ իմ այս գործառույթը: Ես ունեմ չորս որդիներ, ովքեր բոլորն էլ Արցախյան պատերազմի մասնակիցներ են, լուրջ մտավորական, ովքեր ապրում են Արցախում եւ շենացնում են մեր երկիրը:

Ինչ վերաբերում է քաղաքականությանը, պետք է նշեմ, որ ես քաղաքականության մեջ նոր չեմ: Դեռեւս 1965-ից, երբ ես ընդամենը 3-րդ կուրսի ուսանողուհի էի, ընդգրկվեցի ուսանողական գաղտնի կազմակերպության մեջ, որը պետք է նախաձեռներ Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի նշումը Երեւանում: Հենց այդ պահից սկսած՝ իմ մեջ նստել էր արդեն ազգային գաղափարներին նվիրվելու պատրաստակամությունը, եւ մինչ այսօր ես ինձ համարում եմ ազգային գաղափարախոսության կրողներից մեկը: Կարծում եմ՝ ցանկացած մտավորական, անկախ սեռից՝ կին, թե տղամարդ, պետք է որդեգրի այս գաղափարախոսությունը:

Ես ցավում եմ, որ մենք այսօր չունենք հայոց ազգային գաղափարախոսություն, բայց մի բանում վստահ եմ, որ մեր ժողովուրդը, սկսած 1988-ից, որդեգրել է հայրենիքին նվիրվելու գաղափարը: Ամուսինս եւս Արցախյան շարժման նվիրյալ է, մեր երկրի զինանշանի հեղինակը, ով նույն 1965-ին Հայաստանի Ուջան գյուղում կանգնեցրեց Անդրանիկի արձանը, ինչը ժամանակին հզոր խիզախություն էր: Այնպես որ՝ այդ ոգին շատ վաղուց մտել էր մեր ընտանիքը:

Մեր գործունեությունը քաղաքացիական պարտք է, ազգին նվիրվելու պարտք է: Եվ, ընդհակառակը, քաղաքականությունը ոչ թե խանգարում է ինձ՝ որպես կին իրականացնելու իմ ձգտումները, իմ ծառայողական պարտականությունները, այլ ընդհակառակը՝ բացում է դաշտ, որտեղ ես կարող եմ լրացնել իմ ընդունակությունները, եւ ես դա անում եմ շատ մեծ հաճույքով:

Իհարկե, ցանկացած մեծ գործունեություն կարող է կնոջը խանգարել իր կենցաղում, եւ, ինչ- որ տեղ հնարավոր է, որ քիչ ժամանակ մնա դրա համար, բայց լայն առումով, ընդհակառակը, քաղաքականությունն ավելի է ձեւավորում կնոջը, ավելի շրջահայաց դարձնում, ավելի ընկալունակ ե՛ւ ընտանիքում, ե՛ւ դրսում, ե՛ւ հասարակության մեջ: Այն կանայք, ովքեր ունեն բավականին ակտիվություն մեր հասարակական կյանքում, չեմ կարծում, թե նրանց ընտանիքներում այնքան շատ է տուժում կենցաղը, որ ափսոսան, որ իրենց նվիրել են դրան: Ես անում եմ այն ամենը, ինչն անհրաժեշտ է, եւ եթե քաղաքական դաշտն ինձ նույնիսկ փոխում է, ապա փոխում է լավագույնս, ոչ՝ դեպի վատը:

Հարցազրույցը՝ Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆԻ

Լյուդմիլա Բարսեղյան
(«Ժողովրդավարություն» խմբակցություն)

Արզիկ Մխիթարյան
(«Հայրենիք» խմբակցություն)

Ռիտա Մնացականյան
(«Դաշնակցություն» խմբակցություն)

Ռոմելա Դադայան
(«Հայրենիք» խմբակցություն)

Խրամորթ. պատերազմի հետքերով



ԼՂՀ Ասկերան շրջկենտրոնից 14 կմ դեպի արեւելք, Ակնայի անմիջական հարեւանությամբ է գտնվում Խրամորթ գյուղը:

Գյուղ մտնելուն պես աչքի են զարնվում գյուղի ավերակները, որոնք վկայում են, որ վաղ անցյալում այստեղով է անցել եւ իր անջնջելի հետքը թողել պատերազմը: Այսօր գյուղը Արցախի այն եզակի գյուղերից է, որտեղ խնդիրներ քիչ կան: Այժմ այն 450 բնակիչ ունի: Գյուղում կա դպրոց, ուր սովորում է 66 աշակերտ, 16 հոգանոց նախադպրոցական խումբ, ակումբ, բուժկետ, լուծված են ջրի, գազի, էլեկտրաէներգիայի խնդիրները: Բնակարանային խնդիրները նույնպես գրեթե լուծված են, բացառությամբ՝ երկու բազմազավակ ընտանիքների բնակարանների, որոնց աշխատանքներն ընթացքի մեջ են, եւ գալիք տարի, ինչպես գյուղապետ Արգեն Մկրտչյանն է վստահեցնում, պատրաստ կլինեն շահագործման:

Այսօր գյուղացիներն ապրում են իրենց բնականոն կյանքով՝ փորձելով անտեսել այն բոլոր արհավիրքները, որոնց ենթարկվել է գյուղը:

Նախքան պատերազմը՝ գյուղը 210 տնտեսություն, 800-ից ավելի բնակիչ ուներ: Գյուղացիների համար պատերազմն սկսվել է 1991 թվականի հոկտեմբերի 5-ին, երբ գյուղի ուղղությամբ արձակվեց առաջին «ալազանը»:

«Մինչ այդ դեպքը՝ գյուղի ուղղությամբ կրակում էին ավտոմատներով, սակայն սա առաջին դեպքն էր, որ «ալազանով» կրակեցին: Զոհեր չունեցանք այդ օրը: Կարծում եմ՝ ազերիները նպատակ ունեին վախեցնել եւ խուճապ ստեղծել գյուղում, սակայն, ի զարմանս նրանց, դա տեղի չունեցավ, գյուղը չլքեցին գյուղացիները»,-նշում է գյուղի բուժքույր Սրբուհի Աղաջանյանը:

Պատմում է, որ այդ օրերին էլ գյուղն ապրում էր իր բնականոն կյանքով: Երեխաներին դպրոց էին ուղարկում, գյուղացիներն աշխատում էին այգիներում, կանայք հաց էին թխում գյուղի թոնիրներում:

«Հաճախ ազերիները, թոնրի ծուխ տեսնելով, կրակում էին թոնիրների վրա, մենք էլ՝ խմորը թողած փախչում, պատսպարվում էինք: Երբ կրակոցները դադարում էին, հետ էինք գալիս, թոնիրը վառում, հաց թխում»,-շարունակում է Սրբուհին:

1990-ականներին ձեւավորվեց գյուղի 120 հոգանոց ջոկատը: Սակայն զենք, զինամթերք չկար, եւ չէին կարող արժանի հակահարված հասցնել թշնամուն:

Դեկտեմբեր ամսի վերջին գյուղի բնակիչները տեղափոխվել էին գյուղի դպրոցի նկուղ: Նոր տարուն էին պատրաստվում: Տոնածառն էլ էին զարդարել: Կեսօր էր, երբ գյուղից 400-500 մետր հեռավորությունից սկսեցին տանկերով կրակել գյուղի ուղղությամբ:

Գյուղի ջոկատի տղաներն օգնության հասան եւ դպրոցից անմիջապես տարհանեցին բնակիչներին: Նրանց ուղեկցեցին մինչեւ գյուղի մոտակայքում գտնվող լեռներ, որտեղից էլ նրանք ճանապարհվեցին դեպի մոտակա գյուղեր:

1991 թվականի դեկտեմբերի երեսունմեկին Արուսյակ Գրիգորյանն ընդամենը 14 տարեկան դպրոցական էր: Ասում է՝ այսօրվա պես հիշում է այդ օրվա իրադարձությունները:

«Դպրոցի շենքում էինք: Ժամը 1-ին ուժեղ ձայնից ցնցվեց ամեն ինչ: Մեզ օգնեցին՝ դպրոցի պատուհանով դուրս գանք: Վազելով գնացինք եւ մոտակա ավտոտնակի մեջ պատսպարվեցինք: Սակայն կրակոցները չէին դադարում: Այդ վայրկյանին մեծերից մեկն ասաց՝ պետք է դեպի լեռներ փախչել: Ամբողջ գյուղը, մեծ ու փոքր, վազում էին լեռներն ի վեր: Գյուղում միայն ծերերը մնացին: Հիշում եմ, թե ինչպես էին փամփուշտները գլխիս մոտով անցնում: Սակայն մայրս ասում էր՝ հետ չնայես, առաջ նայիր եւ վազիր: Այդպես լեռն անցանք, հասանք Խնապատ»,- հիշում է նա:

Այդ օրը խնապատցիներն իրենց դռները բացեցին բոլորի առջեւ: Ոչ մեկը դրսում չմնաց, բոլորին ապաստան տվեցին եւ ամիսներով պահեցին իրենց տներում:

Դեկտեմբերի 31-ին, երբ ազերիները ռուսների հետ Խրամորթ մտան, միայն գյուղի մեծահասակներն էին մնացել, սակայն նրանք վայրենաբար սպանեցին բոլորին: Երբ գյուղի բնակիչները վերադարձան, մեծահասակների դիակներն ամենուր էին. մեկին մորթել, մյուսին՝ այրել, մյուսի վրա պարպել զենքերը, դիակներն էլ պղծել էին:

«Երբ գյուղ եկանք, սարսափելի տեսարան բացվեց մեր առաջ: 11 մեծահասակ էին սպանել, մի քանի տուն ավերել: Գյուղի տղաներով հավաքեցինք դիակներն ու թաղեցինք»,-հիշում է Արգեն Մկրտչյանը:

Որոշ ժամանակ անց գյուղացիները գյուղ եկան: Սակայն երկար չտեւեց նրանց անդորը: 1992 թվականի հունվարի 31-ին գյուղը նորից հարձակման ենթարկվեց: Այս անգամ թշնամին գյուղ մտավ զինտեխնիկայով եւ բեռնատար մեքենաներով:

«Երբ հեռվից տեսանք նրանց ամբոխը, անմիջապես գյուղի բնակիչներին տարհանեցինք: Հասկացանք, որ անիմաստ է դիմակայել նրանց, նամանավանդ, որ զենք էլ չունեինք: Երբ գյուղ մտան՝ արդեն գյուղում մարդ չկար: Հեռվից տեսնում էինք, թե ինչպես են թալանում գյուղի տները: Այնուհետեւ ամբողջ գյուղը հրի մատնեցին: Գյուղում մի տուն չմնաց: Ամբողջը վառեցին»,- ասում է Ա. Մկրտչյանը:

Մինչեւ 1993 թվականը գյուղի ջոկատը մասնակցեց Ասկերանի մի շարք ուղղություններում տեղի ունեցած մարտերին: Հաճախ գիշերները գյուղ էին գալիս, գյուղի դպրոցում տեղակայված ադրբեջանական ջոկատին վնասներ հասցնում, ականներ դնում: 1993 թվականի հունիսի 26-ին գյուղն ազատագրվեց: Խրամորթի ջոկատը պատերազմի ընթացքում 33 զոհ ունեցավ:

Չնայած 1993-ին է գյուղն ազատագրվել, սակայն գյուղացիները սկսեցին վերադառնալ միայն զինադադարից հետո: Շատերը տեղափոխվեցին Ղարաբաղի այլ բնակավայրեր, մյուսներն արտագաղթեցին Ռուսաստան:

Արուսյակ Գիրգորյանը հիշում է այն օրը, երբ հայրենի գյուղ վերադարձան: Երբեմնի մարդաշատ եւ աշխույժ գյուղն արդեն չկար: Հատուկենտ մարդիկ էին վերադարձել: Ամեն ինչ ավերված էր:

«Առաջին մի քանի տարին գոմում էինք մնում՝ մինչեւ տունը վերակառուցեցինք: Մայրս անընդհատ հույս էր տալիս մեզ, որ շուտով բոլորն էլ կվերադառնան եւ առաջվա պես կապրենք: Սակայն ոչինչ առաջվանը չէր այլեւս, փոքրերս էլ ժամանակից շուտ էինք մեծացել եւ ամեն ինչ հասկանում էինք: Իմ հասակակիցները արդեն պատերազմ տեսած, տղաներից շատերն էլ պատերազմին մասնակցած էին»,- ասում է նա:

Զինադադարից 21 տարի անց էլ խրամորթցիները հաճախ են լսում սահմանի կրակոցները: Սակայն վստահություն ունեն, որ այլեւս ոչ մի վտանգ նրանց չի սպառնում:

«Վախի կամ խուճապի նշույլ անգամ չի լինում՝ նույնիսկ երբ կրակոցներ են լսվում: Սակայն ամեն անգամ շունչներս պահած աղոթում ենք, որ հանկարծ սահմանին կանգնած տղաներին ոչինչ չպատահի: Վստահ եմ՝ մի օր այս կրակոցներն էլ տակավին կլռեցվեն եւ խաղաղությամբ կապրենք»,- եզրափակում է Արուսյակ Գրիգորյանը:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Առաջնախաղ արցախյան բեմին

Մարտի 27-ը Թատրոնի համաշխարհային օրն է (World Theatre Day): Այն միջազգային տոնացույց է մտել 1961-ից, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Թատրոնի միջազգային ինստիտուտի (International Theatre Institute, ITI) IX կոնգրեսի կողմից եւ ամեն տարի նշվում է մարտի 27-ին՝ ի նշանավորումն թատերական արվեստի մեծ հեղինակության ու դերի: Առաջին անգամ տոնը նշվել է Ֆրանսիայում, ապա տարածվել ամբողջ աշխարհում:

Արցախում եւս նշվում է Թատրոնի համաշխարհային օրը: Ինչպես նախորդ տարի, այս տարի եւս Արցախում Թատրոնի օրը նշանավորվեց առաջնախաղով: Այս անգամ արցախցի թատերասեր հանդիսատեսի դատին ներկայացվեց Յուզաս Գրուշասի «Սեր, ջազ, սատանա» դրամայի հիման վրա բեմադրված տրագիկոմեդիան: Բեմադրման ռեժիսորը Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի նորանշանակ գեղարվեստական ղեկավար Ռուզաննա Խաչատրյանն է:

Մարտի 28-ին կայացած առաջնախաղին ներկա էին ԼՂՀ ԱԺ փոխնախագահ, ՀՅԴ Արցախի ԿԿ անդամ Վահրամ Բալայանը, ԼՂՀ ԱԺ պատգամավորներ, Մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը, Կրթության, գիտության եւ սպորտի նախարար Սլավա Ասրյանը, պաշտոնատար այրեր եւ այլոք:

Ներկայացման դերասանական կազմը Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի երիտասարդ սերնդի դերասաններն են, բացառությամբ՝ ԼՂՀ վաստակավոր արտիստ Մարտին Ալոյանի:

Ներկայացումը տարբերվում է իր տեսակով, որովհետեւ այն ոչ միայն արծարծում է ժամանակակից երիտասարդության տրագեդիկ խնդիրները, այլ այդ խնդիրների առաջացման դրդապատճառները՝ սիրո, ուշադրության, վեհ արժեքների բացակայության պայմաններում առաջացած հոգեբանական անկումները, այլանդակ վարքից հրաժարվելու թուլակամությունը: Արդյունքում ծնվում է ծանր ու դրամատիկ իրավիճակ:

Ռեժիսորն ամենայն մանրամասնությամբ ու շեշտադրությամբ ընդգծել է երիտասարդության եւ ընդհանրապես մարդու կյանքում սիրո մեծ դերը եւ սիրո բացակայությունից ծնվող չարիքները: Գլխավոր դերասանուհու կերպարը նա հակադրել է գլխավոր երեք հերոսներին եւ փորձել նրա միջոցով տիրող ճղճիմ իրականության մեջ լույս ու սեր սերմանել: Ներկայացումն ավարտվում է գլխավոր հերոսուհու լուսավոր մահով՝ եզրակացությունը թողնելով հանդիսատեսի դատին...

Թե ինչքանով է ներկայացումը հաջողվել, ինչ խոչընդոտներ կային ու որքանով է թեմատիկան համապատասխանում արցախյան իրականությանը, երիտասարդ ռեժիսոր Ռուզաննա Խաչատրյանը նշում է. «Մի շարք դժվարություններ կային՝ կապված տեխնիկական հագեցվածության, ռեժիսորական մտահղացման ու նկարչական ձեւավորման իրականացման հետ, որոնք, բնականաբար, թատրոնին հատուկ բեմական պայմանների բացակայության պարագայում բնական են: Այդ իսկ պատճառով ստիպված էինք հարմարվել առկա պայմաններին եւ անել հնարավորը:

Ես շեշտը դրել եմ դերասանական խաղի եւ դերասանների վարպետության վրա, եւ կարծում եմ, որ նրանք արդարացրեցին իմ սպասումները: Ինչ-որ տեղ համաձայն եմ, որ ներկայացման թեմատիկան մի քիչ խորթ ու հեռու է արցախյան իրականությունից, Արցախի երիտասարդների խնդիրներից, բայց ես փորձել եմ ներկայացնել այն, ինչը կյանքի ու գոյության, գեղեցիկի արարման հիմնական աղբյուրն է. դա Սերն է, որն անխտիր անհրաժեշտ է յուրաքանչյուրիս: Պետք է խոստովանեմ, որ այսօր սիրո պակասը շատ է զգացվում...»:

Ներկայացման երիտասարդ կազմի մասին ռեժիսորը նշում է, որ այնպես չէ, որ նախընտրում է աշխատել միայն երիտասարդների հետ, պարզապես ներկայացման բնույթն է այդպիսին, ու հաջողելու համար անհրաժեշտ էր հենց երիտասարդ կազմով աշխատել:

«Պլաններ կան, որ ներկայացումը խաղացվի նաեւ Երեւանում՝ փառատոնների շրջանակում, եւ ոչ միայն. բայց դա դեռ ապագայի հարց է: Այսօր այն հանձնված է արցախցի հանդիսատեսի դատին, որը, կարծում եմ, ամենախստապահանջն է»,- ասում է Ռ. Խաչատրյանը:

«Շատ գեղեցիկ խաղ էր: Կարծում եմ՝ թեման հասկանալի էր ե՛ւ մեծերի, ե՛ւ երիտասարդների համար: Մարդիկ պետք է հասկանան, որ կյանքը գեղեցիկ է եւ չպետք է այն այլանդակել: Պետք է ապրել մտածված»,- նշում է հանդիսատես, թատերասեր տիկին Ռոմելան:

Հանդիսատեսի շարքում կային նաեւ ԱՄՆ-ից Արցախ ժամանած հյուրեր: Երիտասարդ ամուսիններ Ծիա Վարդապետյանն ու Գրիգոր Յազարյանը նշում են, որ ներկայացումը հիացրել է թե՛ դերասանական խաղով, թե՛ ռեժիսորական մտահղացումներով: «Արցախյան թատրոնի մասին շատ եմ լսել ու կարդացել, գիտեմ, որ արցախցիները թատերասեր ու տաղանդավոր են, շնորհալի շատ դերասաններ են ունեցել: Ցավում եմ, որ այսօր չկան համապատասխան շենքային պայմաններ, ինչը, երեւում էր, խոչընդոտում էր խաղին: Հուսով ենք, որ մեր հաջորդ այցի ժամանակ արցախցիներն արդեն կունենան իրենց երազած թատրոնի շենքը»,- ասում է Ծիա Վարդապետյանը:

Հ. ԱՎԱԳՅԱՆ

Անջնջելի փաստեր Շուշիի ջարդերի մասին

Օրերս լրացավ Շուշիում 20-րդ դարասկզբին կովկասյան թաթարների կողմից իրականացված ջարդերի հերթական տարելիցը: Շուշիում, Բաքվում եւ այլ բնակավայրերում կովկասյան թաթարների կողմից 20-րդ դարասկզբին իրականացված ջարդերը կարծես թե մոռացության տրվեցին: Դեռեւս սովետական պրոպագանդան ամեն ինչ արեց, որպեսզի պատմության էջերից ջնջի այդ ոճրագործությունը:

Ցավոք, մենք՝ հայերս, նույնպես լռում ենք՝ հաճախակի մոռացության մատնելով այն, որ այդ մասին հրապարակումներ շատ քիչ կարելի է հանդիպել: Ի տարբերություն հայերիս՝ ադրբեջանցիները եւ թուրքերը ջանք ու եռանդ չեն խնայում իրականությունը խեղաթյուրելու եւ հայերին «ջարդարարի» կերպար տալու՝ օգտագործելով բոլոր դիվանագիտական եւ այլ հնարքներ, այդ թվում՝ միջազգային հարթակներում: Ադրբեջանական ու թուրքական մամուլը եւ համացանցը մեծ թափով քարոզարշավ են տանում՝ արդեն իսկ հայտնի տեխնոլոգիաներով խեղաթյուրելով պատմությունը, Շուշիի հայերի ջարդերը ներկայացնում որպես, այսպես կոչված, «հայերի կողմից ադրբեջանցիների կոտորած»: Սակայն փաստերն այլ բան են վկայում: Միջազգային մամուլի գրապահոցներում պահպանվել են մեծ քանակությամբ փաստեր 20-րդ դարի սկզբին կովկասյան թաթարների կողմից հայերի նկատմամբ իրականացված վայրագությունների մասին:

Արտասահմանյան մամուլը եւ հատկապես ամերիկյան մամուլը լայնորեն անդրադարձել է 20-րդ դարասկզբին Արցախում եւ Արեւելյան Անդրկովկասի հայաբնակ վայրերում տեղի ունեցող անմարդկային վայրագություններին:

Բացի հայերի կոտորածից, 20-րդ դարասկզբի ամերիկյան մամուլում կարելի է հանդիպել նաեւ Արցախի խնդրի վերաբերյալ մի շարք ուշագրավ հոդվածների, ինչը վկայում է, որ Արցախյան հիմնահարցը ոչ թե առաջացել է 1980-ականների վերջին, ինչը հաճախակի սխալմամբ օգտագործում են հայկական աղբյուրները, այլեւ ավելի վաղ է առաջացել: Ահա դրանցից մի քանիսը. ամերիկյան «The Christian Scinece Monitor» թերթի 1915թ. օգոստոսի 5-ին լույս տեսած համարում գրված է. «Karabagh is inhabited exclusively by Armenians, and was formerly practically independent and self-governing» (Ղարաբաղը բնակեցված է բացառապես հայերով եւ եղել է, փաստորեն, անկախ եւ ինքնակառավարվող):

Նույն պարբերականը, 1919թ. օգոստոսի 28-ի համարում անդրադառնալով Անդրկովկասում հայերի եւ թաթարների միջեւ հակամարտությանը, գրում է. «Խնդրի պատճառը հավանաբար քաղաքական է, որը կապված է հայկական Ղարաբաղ նահանգը թաթարական Ադրբեջան Հանրապետությանը բռնակցելու՝ թաթարների ցանկության հետ»: Այնուհետեւ պարբերականն ավելացնում է Փարիզից ստացված տեղեկատվությանը, տալիս հետեւյալ մանրամասները. «Դա տեղի է ունեցել հունիսի 4-ին, առվոտյան ժամը 3-ին, երբ Ադրբեջանի թաթարական կառավարության զինված ուժերը, որոնք ղեկավարվում էին Սուլթանովի կողմից, (որը ուժի միջոցով նշանակվել է հայկական Ղարաբաղի նահանգապետ), սկսեցին հարձակումը Ղարաբաղի մայրաքաղաք Շուշիի վրա»: Ինչպես նկատեցինք, ամերիկյան հեղինակավոր «The Christian Scinece Monitor» պարբերականը Արցախը ներկայացնում է որպես հայկական նահանգ՝ բնակեցված բացառապես հայերով եւ ինքնակառավարվող: Սա, թերեւս, կարեւոր փաստարկ է պատմությունը խեղաթյուրելու փորձ անողների համար: Եվս մեկ, թերեւս փոքրիկ, բայց կարեւոր հանգամանք հոդվածում. Շուշի քաղաքը գրված է հայահնչյուն «Շուշի», այլ ոչ թե աղավաղված՝ «Շուշա»:

Արցախի հայկական լինելու փաստի կամ Արցախի ինքնավարության եւ հայկական վերահսկողության մասին անդրադարձ կա նաեւ այլ պարբերականներիում: Կարելի է առանձնացնել ֆրանսիական հեղինակավոր «Le Temps» պարբերականը, որտեղ ոչ միայն նկարագրվում է կովկասյան թաթարների կողմից հայկական գյուղերում իրականացված ջարդերի եւ վայրագությունների մասին, այլեւ ընդգծվում է Արցախում հայկական վերահսկողության մասին: Այսպիսով, «Le Temps» թերթը գրում է. «Այսօր թաթարական հզոր ուժեր հարձակվել էին Ասկերանի անցման վրա, որը գտնվում էր հայերի վերահսկողության տակ, բայց չկարողացան այն վերցնել: Դրա համար հարձակվեցին Հարմիութ (Խրամորթ) եւ այլ գյուղերի վրա: Երեքշաբթի քրդերը եւ թաթարները հարձակվել են հայկական Ղայիբալիքենդ (Գայլատուն) եւ Կրկժան գյուղերի վրա, որպեսզի ճանապարհ բացեն Շուշի հասնելու համար: Շուշիի շրջակայքը մատնված է կրակի»: «Այսպիսով, հստակ երեւում է, որ 20-րդ դարասկզբին Ադրբեջանի թաթարների կողմից հայերի զանգվածային ջարդեր կազմակերպվել են ոչ միայն Շուշիում, այլեւ՝ Արցախի տարբեր վայրերում: 1919թ. լույս տեսած մի քանի ամերիկյան հեղինակավոր թերթերի, այդ թվում՝ «The New York Times» պարբերականի էջերում գրված է. «Ինչեւէ, վայրագությունների նոր ալիք է սկսվել Շուշիին հարակից հայաբնակ գյուղերում: Հունիսի կեսին լավ զինված 2000 հոգուց բաղկացած խմբավորում, որն առաջնորդում էր Սուլթանովի եղբայրը, հարձակվել է մեծ Ղայբալիշեն (Գայլատուն) հայկական գյուղի վրա, որը գտնվում է հենց Շուշիի մոտ, թալանել եւ վառել են այն. մոտավորապես 600 հայեր սպանվել են»: Կովկասյան թաթարների կողմից հայկական գյուղերի վրա հարձակումներին եւ ջարդերին է անդրադառնել նաեւ ռուսալեզու «Кавказское слово» պարբերականը. «1919 թ. հունիսի 4-5-ը Շուշիի եւ նրա շրջակայքում տեղի են ունեցել բախումներ՝ ադրբեջանցիների, քրդերի եւ հայերի միջեւ: Քուրդ եւ ադրբեջանցի քոչվորներն առաջնորդող նահանգապետ Սուլթանովի եղբոր կողմից կոտորեցին հայկական Ղայբալի (Գայլատուն) գյուղի բնակիչներին: Հարձակման ենթարկված հայկական այլ գյուղերի բնակիչներ կազմակերպել են ինքնապաշտպանություն եւ հարձակումները հետ մղել: Ըստ Բրիտանական ռազմական առաքելության ներկայացուցչի՝ Ղայբալիքենդ (Գայլատուն) գյուղի 700 բնակիչներից կենդանի են մնացել միայն 11 տղամարդ եւ 87 կին ու երեխա: Այդ դեպքերից հետո Սուլթանովը շրջափակել է Շուշիի հայկական թաղամասը»:

Այսպիսով, ի՞նչ է վկայում այս ամենը: Այն ոչ միայն եւս մեկ անգամ ապացուցում է կովկասյան թաթարների, այսինքն՝ ներկայիս ադրբեջանցիների կողմից 20-րդ դարասկզբում հայերի նկատմամբ իրականացված վայրագությունների եւ ջարդերի մասին, այլեւ վկայում են այն մասին, որ հայերի ջարդեր տեղի են ունեցել ոչ միայն Շուշիում, Բաքվում եւ այլ խոշոր քաղաքներում, այլեւ հայկական գյուղերում, ինչի մասին նույնիսկ մենք՝ հայերս, մոռացել ենք:

Ինչ վերաբերում է բուն Շուշի քաղաքում տեղի ունեցած հայկական ջարդերին, նույնպես բազմաթիվ վկայություններ կան, որոնցից նշենք մի քանիսը: Ամերիկյան մամուլի պահոցում կարելի է գտնել շատ հոդվածներ՝ Արցախում ու նրա շրջակայքում կովկասյան թաթարների կողմից հայերի նկատմամբ իրականացված ոճրագործությունների մասին: Հատկապես ուշագրավ է հետեւյալ հոդվածը. «The New York Times» պարբերականի 1919թ. սեպտեմբերի 4-ի համարում (այս մասին գրել են նաեւ ամերիկյան այլ թերթեր) լույս է տեսել մի հոդված, որը պատմում է Շուշիի ջարդերի եւ վիրավորներին չլքելու ամերիկացի բուժքույրերի վճռականության մասին: «Nurses stuck to post»-ի «Բուժքույրերը կառչած են իրենց գործին» վերնագրով հոդվածում նշվում է ամերիկյան երկու բուժքույրերի մասին, ովքեր, անտեսելով իրենց կյանքին սպառնացող վտանգը, նախընտրեցին մնալ Շուշիում եւ օգնել վիրավոր հայերին. Երկու ամերիկացի բուժքույրեր՝ միսս Մարգարետ Մաքը Հիլբուրնից եւ միսս Ռութ Ստյուարտը Նյու Յորքից, ովքեր աշխատում էին Մերձավոր Արեւելքի օգնություն ամերիկյան հանձնաժողովում, հրաժարվել են լքել Շուշի քաղաքում գտնվող վիրավորներին, որոնք ողջ են մնացել թաթարների կողմից իրականացված կոտորածից հետո: «Նյու Յորք Թայմսի» այս հոդվածը ոչ միայն փաստում է Ադրբեջանի թաթարների կողմից Շուշիի հայերի կոտորածների մասին, այլեւ ապացույց է առ այն, որ այդ կոտորածները ոչ միայն մեկ կամ մի քանի օր են եղել, այլեւ պարբերական բնույթ են կրել, որն իր գագաթնակետին է հասել 1920թ. մարտին, երբ Շուշիում կոտորվեցին տասնյակ հազարավոր հայեր:

Շուշիի կոտորածը հետեւյալ կերպ է բնութագրել հայտնի կոմունիստական գործիչ Սերգո Օրջոնիկիձեն, ով 1920թ. գլխավորել է ՀԿ ՌԿՊ (Խորհրդային Միության բարձրագույն ղեկավար մարմին) Կովկասյան բյուրոն. «Այսօր ես սարսափով եմ հիշում այն տեսարանը, որ մենք տեսանք 1920թ. մայիսին Շուշիում: Գեղեցիկ հայկական քաղաքը հիմնովին ավերվել, թալանվել էր, իսկ ջրհորներում տեսանք կանանց եւ երեխաների դիակներ»: Ադրբեջանցի կոմունիստական գործիչ Մուսաեւը այսպես է բնութագրել 1920թ. մարտին Շուշիում տեղի ունեցածը. «Անխնա ոչնչացում անպաշտպան կանանց, երեխաների ու ծերերի: Հայերը ենթարկվել են մասսայական կոտորածի: Սիրուն հայ աղջիկները բռնաբարվում էին, այնուհետեւ գնդակահարվում: Խոսրով-բեկ Սուլթանովի հրամանով ջարդերը շարունակվեցին վեց օր, հայկական մասի տները թալանվեցին եւ վերածվեցին մոխրի: Այդ դեպքերի ընթացքում Խոսրով-բեկ Սուլթանովը մուսուլմաններին ասում էր սուրբ պատերազմի (Ջիհադի) մասին եւ կոչ էր անում նրանց՝ վերջ տալ Շուշի քաղաքի հայերին՝ չխնայելով կանանց եւ երեխաներին»:

Բազում փաստեր կան նաեւ կովկասյան թաթարների, այսինքն՝ ներկայիս ադրբեջանցիների կողմից հայերի նկատմամբ իրականացված վայրագությունների մասին: Ամերիկյան հեղինակավոր «The New York Times» պարբերականի 1920թ. մայիսի 3-ին լույս տեսած համարում հանդիպում ենք հետեւյալ վերնագրով հոդվածի. «Baku Armenians face extermination. Allied High Commissioners message tells of Azerbaidjan muslims crimes» («Բաքվի հայերը կանգնած են ոչնչացման առաջ. դաշնակիցների բարձր հանձնաժողովականները հայտնում են ադրբեջանական մուսուլմանների հանցագործությունների մասին»): Սույն հոդվածում կարդում ենք հետեւյալը. «Բաքվում հայ բնակիչների իրավիճակը ծայրահեղ ծանր է: Ամեն օր ամեն տեսակի հանցագործություններ են կատարվում հայերի դեմ տեղական ցածրաստիճան իշխանավորների եւ Բաքվի տեղաբնիկների կողմից: Զանազան պատրվակներով հարուստ հայերը տուգանվում են ահագին չափերի գումարներով: Այնուհետեւ հոդվածում նշվում է ականատեսի վկայությունը գնացքում հայերի կոտորածի մասին. «Մերձավոր Արեւելքի նպաստամատույց կազմակերպության ներկայացուցիչը հայտնում է, որ հայերը դուրս են բերվում գնացքներից եւ սպանվում իր աչքերի առաջ»: Այնուհետեւ հաղորդագրության հեղինակը տալիս է այդ իրավիճակի պատճառը եւ նշում, որ Բաքվի հայերը որեւէ առնչություն չունեն իրավիճակի սրման հետ, եւ նրանք օրինավոր եւ խաղաղասեր բնակիչներ են: «Բաքվում իրավիճակի սրման պատճառ է հանդիսանում հայերի եւ Ադրբեջանի միջեւ թշնամությունը, վիճելի տարածք լեռնային շրջան Ղարաբաղի համար, որը վիճելի տարածք է երկու երկրների միջեւ: Ես կարեւոր եմ համարում, որպեսզի հայտնելու Խաղաղության կոնֆերանսին, որ հայ բնակչությունը Բաքվում կանգնած է բնաջնջման առջեւ: Նաեւ այն, որ նրանք չեն հանդիսանում երկու կառավարությունների միջեւ խնդրի մասնակից, նրանք խաղաղասեր են եւ օրինապահ: Ինչո՞ւ որոշեցի հենց այս հոդվածը մանրամասն ներկայացնել: Պատճառն այն է, որ հոդվածում նկարագրվող 20-րդ դարասկզբի իրավիճակը շատ նման է 20-րդ դարավերջին տեղի ունեցածին: Արցախում սկսված արդարության շարժմանը Ադրբեջանը պատասխանեց հայերի կոտորածով Բաքվում, նույնը կրկնվեց 20-րդ դարավերջին Սումգայիթում, Բաքվում եւ այլուր: Այո..., պատմությունը կրկնվեց, եւ կրկնվեց նաեւ այն բանի համար, որ մոռացության մատնվեց այն: «Թաթարական կոտորածների փախստականները. Հայ փախստականների գնացքը հարձակման է ենթարկվել Ելիզավետպոլիսում» վերնագրով հոդվածի կարող ենք հանդիպել նույն «The New York Times» պարբերականում, որտեղ գրված է. «Հինգ վագոն, լցված հայ փախստականներով Շուշիից, հարձակման է ենթարկվել թաթարների կողմից: Փախստականների մեծ մասը սպանվել են, կանայք առեւանգվել են: Նման գազանություններ տեղի են ունենում տարբեր շրջաններում:

Իսկ վերջում՝ ուղղակի թվերի ապացույց: 1883թ. մարդահամարի տվյալներով՝ Շուշիի բնակչությունը կազմում էր 25656 մարդ, որի 57%-ը հայեր էին, 43%-ը՝ կովկասյան թաթարներ, իսկ 3%-ը՝ ռուսներ եւ հրեաներ: 1930թ. Շուշիում բնակվում էր ընդամենը 300 հայ:

Այս ամենից հետո հարց է առաջանում՝ ինչո՞ւ մենք լուռ ենք մնում, այս ամենի մասին ինչո՞ւ չի բարձրաձայնվում, ինչո՞ւ մոռացության ենք մատնում այդ ողբերգությունները: Եվ, վերջապես, ինչո՞ւ Շուշիի եւ վերը նշված ջարդերի մասին չի խոսվում, ինչո՞ւ ինչ-որ տարելից կամ հարգանքի օր չունենք՝ վերհիշելու համար այդ հազարավոր անմեղ զոհերի հիշատակը:

Հիրավի, մեր ժողովրդի պատմության գրեթե յուրաքանչյուր օր կապված է ողբերգության հետ, սակայն դա չպետք է հիմնավորում լինի լռելու համար, չպետք է անտեսել այս ամենը, նամանավանդ, երբ ադրբեջանական քարոզչամեքենան ջանք ու եռանդ չի խնայում ոչ միայն պատմությունը խեղաթյուրելու ու իր անցյալի մութ էջերը սրբագրելու համար, այլեւ ամեն ինչ անում է՝ հայ ժողովրդին իր իսկ սեփական մեղքերը բարդելու համար, հայերին միջազգային հանրության առջեւ «ջարդարարի» կերպարանք տալու համար՝ օգտագործելով ամեն մի հնարք: Մեր հարեւանները, չունենալով որեւէ փաստարկ, հասնում են որոշակի հաջողությունների միջազգային հարթակներում: Իհարկե, հասկանում ենք, որ դրան նպաստում է մեծ ֆինանսական միջոցները, որոնք նրանք վատնում են վերը նշվածի համար: Եվ, փոխարենը, մենք պարզապես լռում ենք եւ ուղղակի քննադատում միջազգային հանրությանը՝ ադրբեջանական վարչակարգին սատարելու մեջ, եւ, որ ավելի զավեշտալի է, քննադատում ենք Ադրբեջանի իշխանություններին ստի, խեղաթյուրումների, կաշառակերության եւ այլնի համար: Սակայն պետք է հասկանանք, որ Ադրբեջանը, որպես հանցագործ, ամեն ինչ անելու է իր մեղքը թաքցնելու, խեղաթյուրելու, մոռացության տալու համար: Սա մեզ համար զարմանալի չպետք է լինի: Պարզապես պետք է քննադատությունների փոխարեն մենք էլ սկսենք գործել՝ միջազգային հանրության առջեւ ներկայացնելով մեր փաստարկները:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պենզայից-Ղարաբաղ՝ Մայր հայրենիքի կանչով

Անյուտա Թադեւոսյանը պատերազմի մասնակից այն բուժքույրերից է, ով անցել է պատերազմի թոհուբոհով եւ մինչ այսօր աշխատում է հոսպիտալում: Այն հոսպիտալում, որի հիմնադիրներից մեկը հենց ինքն է, այն հոսպիտալում, որի պատերի ներքո անցել է նրա ամբողջ կյանքը եւ դարձել նրա հարազատ տունը:

Անյուտան ավարտել է Կապանի բժշկական քոլեջը, որից հետո ընտանիքով բնակություն են հաստատել ՌԴ-ի Պենզա քաղաքում: Այդտեղ էլ սկսել է աշխատել որպես բուժքույր: Երկու տարով պետք է գործուղվեր արտասահման, սակայն հրաժարվեց առաջարկից եւ ընտանիքի հետ մեկնեց Արցախ:

Մինչ այդ, Սպիտակի երկրաշարժից տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով աշխատում էր Երեւանի Միքայելյանի անվան վիրաբուժական հիվանդանոցում: Հիվանդանոցում առաջարկել էին մշտական աշխատանք, սակայն հրաժարվել էր՝ ասելով, որ Ղարաբաղում իր կարիքն ունեն:

Անյուտայի անունը, առանց նրան տեղյակ պահելու, զինկոմիսարիատ է ներկայացրել նրա ընկերուհին՝ Արեւիկ Անդրյանը:

Աղդամի կողմից «Ալազան» հրթիռներով խփում էին Ստեփանակերտին, Անյուտան քրոջ երեխաներին պիտի տաներ գյուղ: Քանի որ Սրխավենդի ճանապարհը փակ էր, ստիպված ձյուն-ձմեռով անտառով էին գնացել: Քաղաք վերադառնալով՝ Արեւիկից իմացել է, որ իր անունը եւս ներկայացրել է կամավորականների ցուցակում: Ծնողներին ձեւական մի փաստաթուղթ էր ցույց տվել, թե իբր զինվորական կոմիսարիատից կանչել են ռազմի դաշտում բուժօգնություն ցույց տալու համար: «Արեւն ինձ շատ ուրախացրեց այդ քայլով, պատրվակ էր, որովհետեւ ծնողներս չէին թողնի կամավորագրվեմ, ուզում էին իրենց հետ մեկնեմ Ռուսաստան»,- ասում է բուժքույրը:

Անյուտայի ընտանիքը մեկնեց Ռուսաստան, իսկ ինքն անցավ իր գործին:

«Շուշիից անդադար ռմբակոծում էին Ստեփանակերտը: Եթե ծայրից ծայր անցնեիր Ստեփանակերտով, ապա մի մարդ անգամ չէիր հանդիպի, որ բարեւես, երկու բառ փոխանակես... Դատարկ փողոցներում անգամ սարսափ էր տիրում, բոլորը ճխտվել էին նկուղները, քաղաքով մեկ տարածվում էր միայն պայթյունների եւ մութ նկուղներից հասնող աղոթքի շշուկները,- պատմում է Անյուտան,- մենք հանգստի ժամ չունեինք. եթե գնում էինք գործի, ապա չգիտեինք, երբ կվերադառնանք տուն՝ 1,2,3 օրից, թե մի շաբաթից: Հենց որ սկսվում էր քաղաքի ռմբակոծությունը, հոսպիտալի բոլոր աշխատողները, կրակոցների տակ վազելով, ուղղվում էին հոսպիտալ՝ իմանալով, որ վիրավորների հոսքը կշատանա:

Քույրս ասում էր՝ մարդիկ վազում են նկուղներ եւ թաքնվում, դուք էլ խենթերի պես վազում եք հոսպիտալ: «Պետք չէր մեզ ոչինչ ասել, եւ ոչ մի կրակոց չէր կարող մեզ կանգնեցնել, վիրավորները մեզ էին սպասում...»,- ասում է նա:

«Սկզբնական շրջանում 40 աստիճան ջերմություն էի ունենում, մինչ օրս չեմ հասկանում՝ ինչից կարող էր լինել: Չլդրանում էինք, երբ առաջին վիրավորին բերեցին, հաղթանդամ, երիտասարդ տղա էր, բոլորը խառնվել էին իրար, երկար աշխատեցինք, բայց չկարողացանք փրկել նրա կյանքը. տղան օպերացիոն սեղանին մահացավ: Ամբողջ մարմինս դողում էր, չէի կարողանում զսպել արցունքներս,- ասում է նա,- մտքում ինձ համոզում էի, որ եթե հասել է հոսպիտալ, ուրեմն պիտի փրկվի, որ մեր ձեռքերում այդ երիտասարդը չի կարող մահանալ, որ Աստված չի կարող այդքան անարդար լինել այդ երիտասարդի նկատմամբ, բայց փաստորեն...: Այդ պահից հետո ես էլ չկարողացա լացել, կորցրի այդ ընդունակությունս... Պատերազմի ողջ տարիներին ես կարծես թե շոկի մեջ էի, եւ մինչեւ հիմա չեմ կարողանում մոռանալ պատերազմի հասցրած վերքերը»:

Բուժքույրը պատմում է, որ հոսպիտալում էին, երբ լսեցին, որ Բեկոր Աշոտը վիրավորվել է: Ասում է, որ կարծես հանգիստ էին այդ ժամանակ, որ «Ասկլկան» այս անգամ էլ է փրկվելու. «Մտածում էինք, որ էլի կփրկվի, բայց... քարացել էինք, կարծում էինք վերջ, Ղարաբաղը հանձնեցինք...»:

Բեկոր Աշոտի զոհվելուց հետո վաշտը թողեց դիրքերը, եւ ադրբեջանցիները սկսեցին ռմբակոծել Չլդրանի ուղղությամբ: Հոսպիտալի մի քանի բուժքույրեր վիրավորվել են այդ ժամանակ: Անյուտան հիշում է, որ այդ օրը փեշ էր հագել. «Պատերազմի տարիներին դա միակ դեպքն էր, երբ փեշ էի հագել, այն էլ այդ դեպքը պատահեց»: Զրույցին է միանում բուժքույր Արեւիկ Անդրյանը. «Սուս, այն զինվորը աչք էր դրել քո վրա, նրա համար էիր սիրունացել»: Անյուտան չի առարկում, բոլորս ծիծաղում ենք:

Ասում է, որ այդ տարիներին շատ էին նաեւ ուրախ պահերը: Այնքան շուտ էր տխրությունն ուրախության փոխվում, որ միառժամանակ հետո ամեն ինչի նկատմամբ անտարբեր էին դարձել:

«Մեր ջոկատի տղաները չգիտեմ որտեղից երաժշտական գործիքներ էին գտել: Ցեխծորի հոսպիտալի բակում իրիկունները հավաքվում էինք խարույկի շուրջ, տղաները նվագում էին, պարում էինք միասին, ուրախանում»,- հիշում է նա:

Անյուտան պատմում է, որ աղջիկներով իրենց մեջ հոսպիտալի պալատի անկողինները «բաժանել» էին եւ որոշել, որ կամուսնանան այն տղայի հետ, ով կգբաղեցնի տվյալ անկողինը: Հոսպիտալի աշխատող տղաներից մեկն իմացել էր այդ պայմանավորվածության մասին, եւ մագնիտոֆոն ու տարբեր իրեր էր դնում անկողինների վրա եւ հիվանդներին ասում, որ անկողինները զբաղեցրած են:

Պատերազմի ժամանակ ցնցակաթված (կոնտուզիա) է տարել: Մինչ օրս էլ, ասում է, պատերազմն իր հետքերը թողել է: Պատերազմից հետո գմփոցները, ձայները երկար տարիներ չէր կարողանում տանել:

Անյուտան ամուսնացել է պատերազմից հետո: Երկու աղջիկ ունի: Ասում է, որ եթե պատերազմը վերսկսվի, երկրից դուրս կգա, բայց վստահ է, որ չի կարող անել դա՝ աղջիկներին կուղարկի ապահով տեղ, իսկ ինքը դարձյալ կկամավորագրվի: «Մեր կիսադառը կյանքն այդպես է դասավորվել: Երանի նրանց, ովքեր չեն տեսել պատերազմը, երանի նրանց, ովքեր կորուստներ չեն ունեցել: Թող այլեւս ոչ մի զինվոր չզոհվի»,- ասում է նա:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Արցախի նկատմամբ հետաքրքրությունն ավելի է մեծանում ադրբեջանական սադրանքներից հետո

«Ադրբեջանը մշտապես փորձում է խոչընդոտել Արցախի մասնակցությանը միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին: Սակայն Ադրբեջանի գործողությունները ցուցահանդեսների ընթացքում տալիս են ճիշտ հակառակ արդյունքը: Իհարկե, դրանք փոքր-ինչ դժվարացնում են մեր ֆիզիկական մասնակցությունը ցուցահանդեսներին, սակայն այդ ցույցերի շնորհիվ ավելի մեծ ուշադրություն է սեւեռվում դեպի ցուցահանդեսներում ներկայացված մեր տաղավարի, մեր երկրի զբոսաշրջային ներուժի նկատմամբ»,- մարտի 31-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է Արցախի Հանրապետության էկոնոմիկայի փոխնախարար Սերգեյ Շահվերդյանը:

Մարտի 9-13-ը Արցախի պատվիրակությունն առանձին տաղավարով ներկայացրել է Արցախի զբոսաշրջային ներուժը «ITB Berlin 2016» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին, իսկ մարտի 24-ին մասնակցել ՌԴ-ում կայացած զբոսաշրջային միջազգային ցուցահանդեսին:

Երկու ցուցահանդեսների ընթացքում էլ ադրբեջանական կողմը փորձել է կասեցնել Արցախի մասնակցությունը: Երկու դեպքերում էլ՝ նրանց գործողությունները կասեցվել են:

«Մոսկվայում ցուցահանդեսի կազմակերպիչը մեծ ճնշումների է ենթարկվել: Ադրբեջանցիները պահանջում էին, որպեսզի Ղարաբաղի տաղավարը դուրս բերվի ցուցահանդեսի սրահից, որի հետեւանքով հնարավորություն կունենանք մասնակցելու միայն զբոսաշրջային ընկերությունների մակարդակով: Սա անընդունելի է մեզ համար, քանի որ մեր գերնպատակներից մեկն է միջազգային զբոսաշրջային շուկայում ԼՂՀ-ի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ երկրի իմիջի ձեւավորումը, իսկ այդ իմիջի ձեւավորումը կարելի է իրականացնել միայն այն դեպքում, եթե ցուցահանդեսին մասնակցում է երկիրը»,- ասել է Սերգեյ Շահվերդյանը:

Ս. Շահվերդյանը նշել է, որ մեկ տարի շարունակ Ադրբեջանը փորձել է ՄԱԿ-ի զբոսաշրջային համաշխարհային կազմակերպության մեջ անցկացնել մի բանաձեւ, որով արգելափակվում է չճանաչված երկրների մասնակցությունը միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին, սակայն շնորհիվ ՀՀ եւ ԼՂՀ արտաքին գործերի եւ էկոնոմիկայի նախարարությունների համատեղ ջանքերի՝ այդ բանաձեւերի ընդունումը խաթարվել է, եւ Ադրբեջանը իրավական հիմք չի ստացել բողոքարկելու ԼՂՀ մասնակցությունը միջազգային ցուցահանդեսներին:

«ITB Berlin»-ը խոշորագույն զբոսաշրջային ցուցահանդեսներից մեկն է, որն ամեն տարի անց է կացվում Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում՝ «Մեսե Բեռլին» համալիր-ցուցասրահում՝ ունենալով ավելի քան հարյուր հազար այցելու աշխարհի 185 երկրներից:

Ցուցահանդեսի տաղավարներում եւ սրահներում ներկայացվում են զբոսաշրջային օպերատորներ, ամրագրման համակարգեր, ավիակազմակերպություններ, հյուրանոցներ, տարբեր երկրների պատմամշակութային օբյեկտներ եւ զբոսաշրջության բնագավառում գործունեություն ծավալող բազմաթիվ կազմակերպություններ:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Լոխ ինձ մչանք ապրիք, բայց բախտավեր ապրիք.103 ամյա տատի օրհնանքը

Մարտունու շրջանի Աշան գյուղում ապրող Մանյա Խաչատրյանը շուտով կբոլորի իր 103 պատկառելի տարին: Նման տարիքն աշանցիների համար անսովոր երեւույթ չէ, որովհետեւ գյուղը միշտ էլ հայտնի է եղել իր երկարակյացներով: Թե ինչն է պատճառը, գյուղացիները դժվարանում են պատասխանել, իսկ ինքը՝ Մանյա տատիկն ասում է. «Երեւի Ըստուծանա յա տված»:

Երբ բացում եմ տան դարպասը, ինձ դիմավորում են աղջիկը՝ Լաուրա Պետրոսյանը եւ Ստեփանակերտից ժամանած թոռը՝ Սուսաննան: Հարցիս, թե ուր է տատին, փոքր-ինչ ամաչելով, փոքր-ինչ հպարտությամբ մատնացույց են անում տան հարակից բանջարանոցը, որտեղ նկատվում է տատի փոքրիկ կերպարանքը: Ի՞նչ է անում՝ հարցնում եմ, քաղհան է անում՝ պատասխանում են ժպիտով:

Հեռվից երկար նայում եմ նրա փութաջան շարժումներին, մատները պոկոտում են ամենափոքր մոլախոտն անգամ: Հետո ձեռքով վերցնում է հողն ու հոտ քաշում մի քանի րոպե:

- Կյարունքու վըտ ա կյամ,- ասում է ինքն իրեն եւ ավելացնում,- լոբին վարելի վախտը յիտանում ա:

Աղջիկն ասում է, որ տեսողությունն ու հոտառությունը շատ լավ են: Ասում է՝ ամեն օր գիրք է կարդում, պահանջում՝ նորերը: Միայն լսողությունն է մի քիչ վատ, բայց անընդհատ ուզում է, որ հետը զրուցեն, գյուղի ու աշխարհի անցուդարձից պատմեն: «Դրա համար «բարձրախոս» եմ դառել, բոլորի հետ բարձր եմ խոսում»,-շարունակում է աղջիկը:

Մանյա տատին, ինձ նկատելուն պես, մոտենում է.

Երբ հարցնում եմ, թե արդյո՞ք չի հոգնում աշխատելուց, պատասխանում է.

- Գործ անող մարդը վստակել չի, թամբալը կվստակե...»:

Մանյա տատին անգիր ու առանց շփոթելու հիշում է իր զավակների, թոռների ու ծոռների անուններն ու տարիքները, ով ինչով է զբաղվում, որտեղ է ապրում:

- 12 ծոռն օնիմ, 11 կոռն օնիմ...Ինձ նման կա վեչ..

Հարցնում է՝ քանի՞ երեխա ունես:

- Մեկ, - ասում եմ:

- Մինը խոխա չի, այ բալա, ախպորը ախպեր, քվորը՝ քուր պիտի ինի, վեր ուրուր դալու ինին:

Նա իր երկարակյացության մասին երկար խոսել չի ուզում, ասում է.

- Ամեն ուռութանա Ըստուծեն անա խնդրում ում, վեր իմ կյանքս եր օնե, թորքեն ռաչին վենը կացած մեր ջահիլներեն տա: Ես տահանց կլխավը շոռ տամ, ամեն մինը մին տան բալա յա:

Մանյա տատին հանում է թաշկինակն ու սրբում արցունքները, հետո նայում է դեպի հեռուն, որտեղ բարձր սարի վրա երեւում է գյուղի հինավուրց սրբավայրը՝ Նահատակը:

- Ա Նահատակ, իմ իրեսս քու վննեբրետ տակը, մեր բլոտանցը լավ պահե:

Հետո նա պատմում է իր կյանքի պատմությունը: Ասում է՝ դժվար կյանք է ունեցել, միշտ էլ աշխատել է: Կոլտնտեսությունում հարգված ու սիրված է եղել: Առանց նրան շատ բան չէր ստացվում, բոլորին ոգեւորում էր, աշխատանքի մղում: Գյուղում խոզերի ֆերմա է հիմնել եւ մեծ օգուտ բերել գյուղի կոլտնտեսությանը: Այդ պատճառով գյուղացիները նրան «Խոզուն Մանյա» են կոչում: Ինքն էլ չի նեղանում, ասում է. «Գործս ընումես անայն տվալ, շատ լավ ա»:

- Հինչքան տիժեր գործա իլալ, առաջնորդը ես ում իլալ: Կլխոզումը առանց ինձ ամալ չի եկալ:

1941 թվականին 22 տարեկան Մանյան ամուսնուն ճանապարհել է Հայրենական մեծ պատերազմ: Այդ ժամանակ երկու զավակ ունեին, իսկ երրորդը ծնվեց մի քանի ամիս հետո՝ այդպես էլ չտեսնելով հորը:

Հիշում է՝ պատերազմ ճանապարհվելիս ամուսինը հանել է գլխարկն ու դնելով իր գլխին՝ ասել. «Մանյա, փափախս լավ կպահիս»:

- Դե Մանյան դանգլա չի, լափ լավ կլոխում ընգալ հինչա օգալ տրանավ ասե... Տի էլ ըրալ ում:

Անընդհատ գովասանագրեր ու պատվոգրեր էր ստանում ամուսնուն վերաբերող, ասում էին, որ լավ է կռվում: Մի օր էլ՝ 1943 թվականի օգոստոսին «սեւ թուղթը» եկավ:

- Մինչեւ մհենգ փափախը պահում ում... Մինչեւ մհենգ աշկս էն ա դրբզեն, վեր կպեցվե, կկյա տոն...

Մանյա տատին ամեն օր արթնանում է վաղ առավոտյան՝ դեռ արեւը չծագած: Արդեն սովորություն է դարձել: Անպայման մի գործ անում է, պարապ չի նստում: Եթե եղանակը լավ է լինում, շտապում է հողամաս: Աղջիկն ասում է, որ հողամասից կտրել չի լինում: Երբ ջղայնանում են, ասում է.

- Մըծ կնեգը հաց չի՞ օտում, պա էտ հացը շտղա կընի՞:

Ես երկար նայում եմ Մանյա տատի մատներին: Որքան հոգնություն, բայց եւ եռանդ կա իրենց 103 տարին ապրող, բայց դեռ դալար, այդքան ճկուն, այդքան աշխատասեր ձեռքերում...

- Լոխ ինձ մչանք ապրիք, բայց բախտավեր ապրիք...Հնչում է նրա օրհնանքը...

Հերմինե ԱՎԱԳՅԱՆ

Զվարճախոսում են գյուղացիները

Պա ես կյրափար գիդու՞մ ըմ

Ռուսը կյամ ա ղարաբաղցե պռավեն թա.

- Կակ ձելա, բաբուշկա:

Պառավն ասում ա.

- Այան մատաղ, պա ես կյրափար գյուդո՞ւմ ըմ:

***

Մհե պտըհլական ա՞

Մին ծմըռվա օր Հանեսը մթընմթեն եր ա կենում քյընում վերսի:

Հրեւանն ասում ա.

- Հիշտե՞ղ ըս քյընում:

- Քյընում ըմ վերսի:

- Պա խե՞ թվանգ չըս եր կալալ:

- Մհե պեն ա պտհլակա՞ն:

***

Մին օրումը կճնջիմ

Ռայոնան մարթ ա կյամ շենը, Պենին քյընում ա կոշտը, խնթրում, վեր պարեխոսե, ուրան մին դինջ գործ տան:

Ռայոնան եկած մարթը հրցնում ա.

- Կյրիլ-ճնջիլը գյուդո՞ւմ ըս:

Պենին ասում ա.

- Կյրիլու նհետ կործ չօնիմ, ամա մեր կոլխոզումը հիշքան թոխտ կա մին օրումը կճնջիմ:

***

Ետնան կտաս

- Ղավանդ, մին տասը մանեթ փուլ կտա՞ս:

- Չէ, Կարաբեդ, ըլածս լոխ հենգ մանեթ ա:

- Վեչինչ, էդ հենգը տո, հենգն էլ հիբը կընի՝ էն չախը կտաս, ընիլ չի՝ կմնաս պարտք:

***

Կհուվանա- կշըտանա

Սվեգանց Հանեսը դոլմա յա ընում ուտեիս:

Հարթենն ասում ա.

- Ապա, դուլմեն մածուն ըվիլցընի՞մ:

- Հինչ կընի, համ կհուվանա, համ կշըտանա:

***

Քոն իլ

Օրվա մին օր ժլատ շնացուն ղոնաղ ա կյամ հեռե պարիկամներան մինը:

Խեղճը եշում ա եշում, տանը հացեն անունը տվող չընում: Սա օգում ա հաստադ գյիդա՝ հաց տլակա՞ն ըն, թա՞ չէ:

- Ա քուր, վեր հաց օտինք պրծնինք, հիշտե՞ղ ընք քոն ընական:

- Մունք հաց ընք կերալ պրծալ, տու հիշտեղ օգում ըս քոն իլ:

***

Ըստարե հի՞նչ ըս ըսլական

- Հաբեդ, եկ ծիս ինք կալ: Հռնե ասալ ըս քավթառ ա, ըստարե հի՞նչ ըս ըսլան:

***

Մերը պեր

- Ախճի, Հուռում, մին քյընի Վնեսին կացենը պեր, փադը կտրիմ:

Կնեգը քյընում ա տերտակ կյամ:

- Տվավ ո՞ւչ: Քյընի Պատունը պեր:

Հուռումը էլ հա տերտակ ա կյամ:

- Էն էլ չի տվա՞վ: Տահանց ժլատ հերն անիծած: Քյընի մերը պեր:

***

Զարայն ա տաշալ

Կյեշանը մին միլ ա ընում պերած տռանը վեր քցած, վեր աշունքը, բաղա ետ կոճին կոտրած կյերանը փոխե: Եշում ա տեսնում՝ փադը ըստղաս-ընդղան տշտշորած, նզամա քցած, փուչըցրած:

- Ալիշան, ամեն օր ըստեղ խաղ ըս անում, տեսա՞լ չըս էս փադը հու վա տաշալ:

- Գյուդում չըմ, հանց ըմ Զարայն ա տաշալ:

- Էս հի՞նչ դաշանգ տաշալ ա, շշա՛, շշա՛, շշա՛: Փա՛հ, փա՛հ, փա՛հ:

- Զարայը կկարե՞ տի տաշի. ես ըմ տաշալ:

***

Ինքն էլ չի կլոխ ընգլական

Խղուղեն բաղեն պահակը մին կյող ա փռնում, վենները կըպոտում, բաղումը վեր քցում, ինքը վազ տալավ կյամ նախագեն կոշտը:

- Նախագա, մին կյող ըմ փռնալ:

- Պա հի՞նչս ըրալ:

- Վենները կպոտալ ըմ, բաղումը վեր քցալ:

- Ծերքերը կապա՞լ չըս:

- Չէ

- Պա քու տոնը շինվի, վենները ետ չընակա՞ն, փախճի:

- Մեր շնացե յա, ես վեր կլոխ չըմ ընգալ, ինքն էլ չի կլոխ ընգլական:

Լեւոն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«Նշխարներ արցախի բանահյուսության»

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ 100 դրամ:

Խմբագրական խորհուրդ